

---

Ա. ՏԵՐ-ՉՈՎՆԱՆՅԱՆ

# Ե Ս Ք Ի Զ Ն Ե Ր

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ИСТОРИКО-ЯЗЫКОВЕДЕНИЯ  
Полонский Науч  
СССР

---

891.99

Ա-44

Ր Տ Ն Ր Ա Տ

54-11  
Նա 586

13 APR 2011


891.99

Ա. ՏԵՐ-ՇՈՎՆԱՆՅԱՆ

44-44

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Ե Ս Ք Ի Զ Ն Ե Ր



72-52503

ՀԵՏԱԿԱՆ ԿՐԱԹՅՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՍԵՐԵՎԱՆ 1 0 3 2



58405

2 08.08.2013

Պատ. խմբագիր՝ Մ. Հարությունյան  
Ցեն. խմբագիր՝ Տ. Խաչվանքյան  
Պրատգրիչ՝ Հ. Մանուկյան



60252-67

Հրատ. № 2787. Գլավիտ № 8362(բ),  
Պատվեր № 2416, Տիրաժ 2000. Պետ-  
հրատի տպարան. հանձնցած և արտա-  
դրության 3 XII 1933 թ. ստորագրված  
և ավագրության 15 XII 1933 թ.

## Ա Ր Խ Ի Վ Ի Մ Ա Ր Դ Ը

1

Վաթսունից նոր եր միայն լերեք տարի գլորել,  
բայց արդեն զառամյալ ծերունի լեր:

Տարիների հաշիվը չեք պահում: անկետա լրացնե-  
լիս հարկադրված յեղավ շուռ ու մուռ տայ տարիների  
ընթացքում կուտակված փաստաթղթերը՝ ծննդականը  
գանհյու:

Յեթե ծննդականը չգտնեք, լերևի հարկադրված  
կլինեք մոտավոր հաշվով նշանակելու:

Ապրում եր միշտ նույն քաղաքում, միշտ նույն  
տանը:

Քանի տարի լեր ապրում այդ տանը, քանի տարի  
լեր միշտ նույն դարպասով գնում ու գալիս...

Աչքը բաց եր արել, տեսել եր այդ բարձր խուլ  
պատը փողոցի կողմից, իր լերկփեղկ դռնով և գետնա-  
փոր դռնակով դեպի ցած իջնող նկուղի վրա բարձրա-  
ցած միահարկ աղյուսաշեն լերկարավուն այդ տունը,  
առջևի լաշն պատշգամբով, վորի գուլջը վաղուց ան-  
հետացել եր, տախտակի բնական գույնին փոխվելով,  
աստիճանաբար լերանգավորվելով յեղանակի ու ժա-  
մանակի քմահաճ վրձինով:

Նա լերեք այդ պատշգամբը դռնավոր չեք տեսել:  
Տարիներ ելին անցել և տարիներն իրենց ծանրու-  
թյամբ նստել ելին նրա ուսերին. մանկությանը հա-



Չորդել եր պատանեկությունը, չերիտասարդութունը և ինքն ել տան նման ձերացել եր, կորացել եր նրա մեջքը, ինչպես տան պատերն ելին ժամանակի ճնշումից դուրս ընկել գողավոր: Քալելիս կախ եր ընկնում մի կողքի, ինչպես պատշգամբի տանիքը, վորի մի կողմի սյունները կարճանալով, իջել ելին և տանիքը բակի կողմից շեղագծով եր յերեվում այլևս:

Քայլում եր մի վոտքը մասամբ քարշ տալով և ձեռնափայտին հենվելով, ասես ձեռնափայտը նրա լերրորդ վոտքը լինեի:

Այդ հին, ժամանակի ընթացքում մաշվելուց կարճացած գորշ ձեռնափայտը՝ սևագույն կոշտերով:

Ինքը և տունը նույնացել ելին աչնչափ, վոր ասես մեկը մյուսի անբաժան մասն եր կազմում և մեկը մյուսին չեր տեսնում, չեր զգում, ինչպես մարդը չի զգում սեփական մարմնի անդամները:

Նա չեր զգում նույնիսկ սենյակների փոփոխութունը, վոր ժամանակի ընթացքում տեղի լեր ունենում, ավելի ու ավելի քշանալով:

Տան մյուս բնակիչներն ավելանում ելին, պակասում ելին, հները գնում ելին, նորերն ելին գալիս, փոփոխվում ելին նրանց սովորութունները, բնավորութունները: Անշարժ եր մնում նա, անփոփոխ ելին նրա սովորութունները, նրա բնավորութունը:

Առավոտյան գնում եր ծառայության, վերադառնում եր տուն, ժամանակին ճաշում եր, ժամանակին քնում եր և մյուս որն ելի նույնը:

Կատարվող փոփոխութունները չեյին ազդում նրա ճշտապահության վրա:

**Հեղափոխության յետուն ժամանակ պատահեց, վոր**

նրա հիմնարկութունը, ավելի հրատապ դորձերի շնորհիվ, անկարեվոր համարվելով, մի քանի որ դադարեց աշխատելուց: Սակայն նա այդ որերին ել ճիշտ իր ժամանակին դնում եր հիմնարկութուն, և թեպետ նույն այդ հիմնարկում ուրիշներն ելին աշխատում, նա աջնուամենայնիվ մնում եր մինչև վորոշված ժամը: Շտապով, հեղձեղ վազվզող մարդկանց վոտքերի տակ չընկնելու համար քաշվում եր մի հանգիստ, դատարկ անկյուն՝ յեթե հնարավոր չեր լինում իր սեղանին ավելի մոտ մնալու:

Չեր ել նայում վազվզողներին, չեր ել հետաքրքրվում նրանց արածով:

Նա չեր կարողանում պակեքացնել, վոր այդ ժամերին կարելի չե տանը մնալ:

Շատ չեր մնացել գիմնագիտան ավարտելու, լերբ անսպասելի մեռավ հայրը, անտերունչ թողնելով ուսուցչին հատուկ բազմանդամ ընտանիքը, վորի անդամների մեջ նոր չորեքթաթ անող մանուկ կար:

Մեծ տղան ինքն եր, տան հոգան իր վրա յեր ժանրանում:

Լավ սովորող եր, ուսուցիչները փայլուն ապագա ելին պուշակում, սակայն բոլոր հույսերն ողբ ցնդեցին:

Սորը հառաչանքով թողեց դպրոցը, տրտում սրտով հրաժեշտ տվեց դասընկերներին և նահանգական վարչության ատչանում, ուսուցիչների ոժանդակությամբ ու յերաշխավորությամբ, պրագրի պաշտոնի մտավ:

Բնականից աշխատասեր եր ու ճշտապահ: Նոր պայմաններում ավելի գիտակցելով իր վրա ընկած պարտականության մեծ պատասխանատվութունը,



կրկնապատկեց իր ջանասիրութլունը, վորը ընտանիքի նկատմամբ ինքնամոռացութլան եր հասնում:

Ռոճկի յուրաքանչյուր չնչին հավելում թեթևացնում եր ընտանիքի տնտեսական վիճակը, մի քանի ոք կուշտ լինելու հնարավորութլուն ասելով նբանց:

Նոր եր պատանեկութլան սահմանը թեկոխել, նոր եր սկսվում նրա համար անհոգ ու վառվուռն հեռանկարներով ծանրաբեռնված ապագա կլանքը, յերբ անսպասելի ծանրութլան տակ ճմլվեց և ընտանիքի բեռան տակ մտավ ու տարելներ շարունակ այդ բեռն ուսերի վրա կրեց:

Անցավ սկզբնական պատանեկական հուսալքումը, ամրապնդվեց և վերջնականապես մոռացավ ինքն իրեն:

Բոլոր անձնական հեռանկարներին փոխարինեց նոր մի ձգտում, նոր մի հեռապատկեր — փոքրիկներին համար փոխարինել վաղամեծիկ հորը և նրանց համար լավ ապագա ստեղծել:

Այն, ինչ իր համար եր պատկերել, նրանց վերապահեց և աննկուն եր իր վորոշման մեջ:

Վեցը ուտող բերան եր, ինքը միակ աշխատողը, Տարինեն անցնում ելին իրենց հավիտենապես սահմանված անփոփոխ շրջապատլտով:

Սակայն տարիները նոր վոչինչ չեյին բերում նրա համար, բացի պաշտոնի աննշան փոփոխութլուններից, վալրիվերումներից:

Նա ինքն ել վոչինչ չեր սպասում տարիներից, բացի դեպի վեր ընթացող այդ փոփոխութլունից, բայց վոչ փառքից դրդված, այլ այն չափով, վորչափով դա ավելացնում եր նրա ուժիկը:

Վոչ, նա ուրիշ վոչինչ չեր սպասում ժամանակի շրջապատլտից:

Տանից նահանգական աստան և նահանգական աստանից տուն-ուրիշ ճանապարհ չունեեր նա:

Յեվ նույնիսկ նույն գծից բացի ուրիշ գծով չեր կատարում նա ժամանակի պես հարատև ու միապաղաղ կրկնվող այդ ճանապարհը:

Փողոցը, ուր ապրում եր նա, քաղաքի խուլ թաղում եր գտնվում և այդ խուլ փողոցներով ել կատարում եր նա ամենորլա յերթը:

Այլևս մոռացել եր քաղաքի մլուս փողոցների գոլութլունը, բացի շուկայից, ուր գնում եր նա կիրակի ու տոն որերին ու յերկար թափառում եր՝ ավելի ասեման ձեռք բերելու հարկավոր ուտեստեղենը:

Մայրը և մեծացող ջուլըր գիտակցում ելին նրա գոհարերութլան սահմանների անշափելիութլունը:

Հասկանում ելին, վոր իլում են նրա յերխասարդութլունը:

Ինչ կարող եր անել ժամանակից առաջ ձերացած մի մայր, կամ ինչժվ կարող եր ոգնել փոքրիկ մի ջուլը, թեպետև դրութլունը գիտակցելով:

Մայրը կամեցավ նրան ամուսնացնել, համարելով դա փոքրիկ մխիթարանք ու հատուցում խորտակված բոլոր հույսերի հանդեպ:

Սակայն նա մերժեց:

— Յեղբայրներս ուսումն ավարտեն, հետո, — ասաց նա և միանգամ ընդմիշտ փակեց այդ հարցը:

Ուշի — ուշով հետեվում եր նրանց, իր իմացածի պահանջներում ոժանդակում եր:



Ուրախանում եր նրանց ամեն մի հառաջադիմության համար փորձրիկ մանկան նման:

Յեղրաչրներն ու քուչրը ուշիմ ելին, խելացի:

Հոր մահից մի քանի տարի հետո մեկ անգամ ուրախություն յեղավ նրանց տանը:

Քուչրն ամուսնացավ:

Ինչպէս պատահեց այդ, նա չիմացավ:

Քուցե դա մոր խորամանկությունն էր՝ նրա ծանրությունը մասամբ թեթևացնելու:

Դժգոհ եր, վոր քուչրը կխատ թողեց ուսումը, բայց չկամեցավ ընդդիմանալ մոր ցանկությանը:

Փեսան ոտար քաղաքից եր, հոր լավ ծանոթներից մեկի վորդին, վորին մայրը ճանաչում եր:

Մի խնդրում չհամաձայնեց մոր հետ. — չկամեցավ, վոր ծանոթ բարեկամները քամահրեն իրեն, վորպես չեղոր:

Համեստ հարսանիք սարքեց և քրոջն ուրախացած սրտով ճանապարհ դրեց:

Վորչափ ել քրոջ դնալը ազատում եր նրան ծախսերի վորոշ մասից և մյուսների համար ավելի համեմատական լավ պայման ընձեռում, սակայն վերջին պահին նա դժգոհ եր:

Նվագի չեղրափակող վերջին չելվելը միվեց նրա մռայլած սրտում:

Բայց որբի միալար ընթացքի աոորչան ամօքեց նրա վիշտը և նրա դեմքն ու մտքերը նախկին կերպարանքն առան:

Տանից նահանգական ատչան, նահանգական ատչանից տուն — քայլում եր նա և իր սովորական սեղանի մոտ թագվում թղթերի կուլտերի խորիմաստ

կամ անիմաստ, արժեքավոր կամ անարժեք, բայց մեծ մասով կյանքից հեռու, ինչ վոր այլ նպատակներ հետապնդող բովանդակությունների լայնածավալ ծանծաղուտի խորքեր:

## 2

Նրա ներքին աշխարհը սահմանափակվում եր իր աշակերտական շրջանի հիշողություններով, վորոնք զերծ մնալով կյանքի այլ և այլ տպավորությունների խճողումներից, չերբեք շեշին աղտանում:

Նրա միտքը կուսական անարատություն եր պահպանել կյանքի հանդեպ, մնալով նույնչափ պատանի, վորչափ վառվառն պատանեկական եր այն որբերին, չերբ խորունկ հառաչանքով վերջին անգամ դիտեց դասարանի խունացած, գանաղան մակագրություններով ու խզմուքներով լցված պատերին, վերջին անգամ նստեց փորփրած ու խարխուլ նստարանին և արտասովաթոր աչքերով, առաջ չշարժվող վոտքերով դուրս դնաց:

Լնկերների կարեկցական հայացքների տակ նա զողդոջ մատներով բաց արեց դուռը և փակեց իր յետեից, փակեց հավիտյան:

Տարիների ընթացքում նա խանդաղատանքով եր հիշում իր ընկերներին, մանավանդ իր հետ նույն նստարանի վրա նստող իր ընկերոջը, վորը նույնպես լավ սովորող եր իր նման և բարի, ցավակից ընկեր եր, սակայն ավելի աշխուժ, ավելի չեռանդով ու ավելի ըմբոստ վոգու տեր, քան ինքը:

Հիշում եր սիրով այն նիհար, վատ հագնված սողալին, վորը հաճախ եր իր դասագրքերով ոգավում,



վորովհետև նրա հայրը՝ աղքատ ու խեղճ մի թիթեղագործ՝ չէր հասցնում բոլոր դասական պիտուկները գնել վորդու համար:

Ձեր մոռանում նրա արցունքոտած աչքերը, լերբ ինքը վերջին անգամ նստեց իր տեղը, նրա կողքին, վորպեսզի մի քանի ընդմիջ ընդմիջ թողնի այդ տեղը:

Տարիներ ելին անցել և տարիների մեջ համառորեն շարունակվող հիշողութունը չերբեք չէր փոխում նրա պատկերը, ասես տարիների ծալքերը չերբեք չէլին իջնում իր ընկերոջ ուսերին:

Նա մնում էր միշտ նույն վախտ, նույն կախառ փոքրիկ Համիկը:

Յե՛վ չափազանց մեծ էր նրա զարմանքը, յերբ տեսավ նրան մեծացած, փոխված, այլ վոչ թե թավառն պատանի:

Առաջին պահ նույնիսկ տխրեց, մտքի ինքնաշարժ կապակցութեամբ զգալով, վոր տարիներն իր վրայով ևս սահել, գնացել են, իսկ ինքը կյանքի կողքով է անցել միայն:

Մեկ որ աշխատանքից հետո առն էր վերադառնում սովորականի նման գլուխը կախ, շտապ քալերով:

Քիչ էր մնացել իր ընտանիքին հասնի, յերբ մեկը կանգնեց իր դիմաց:

— Բարե՛կ:

Նա գլուխը բարձրացրեց ու զարժանքով նայեց անծանոթին:

— Չճանաչեցի՛ր, — ժպտաց անծանոթը, — Համիկը:

Նա տարորինակ նայեց նրան, ասես չհավատալով:

— Դե՛ւ, — կասկած հայտնեց:

— Այո յես Շատ եմ փոխվել:

— Փոքրիկ Համիկը, — ինքն իրեն կրկնեց: — Ինչքան մեծացել ես:

Ընկերն ուրախ ծիծաղեց:

— Տասնինգ տարի յե անցել:

— Տասնինգ տարի, մեքենայորեն կրկնեց, ասես զարմանալով, վոր այդչափ ժամանակ է անցել:

— Յերբ, — քնից արթնացածի պես հարց տվեց նա:

— Շուտ են անցնում տարիները, սիրելիս, — ասաց ընկերը, ըմբռնելով նրա հարցի իսկապես նշանակութունը, նրա թեք մտնելով: Դու չե՛լ մեծացել ես: Շատ ես փխվել: Գունքերիդ արդեն պախտակներ կան:

— Իմ ուրիշ,

— Այո, ջոնը ուրիշ, — կրկնեց ընկերը և յերկուսին էլ թախիծը պատեց, դառն հիշողության թախիծը:

Այնուհետև նրանք կրկին հանդիպեցին մի քանի անգամ:

Այդ որերին նրա միալար որերի բնթացքը մասամբ փոխվեց. ուրախ էր. մեկ անգամ նույնիսկ սենյակում քալելիս սուլեց աշակերտական լերգի մի լեզանակ. Ճաշերից հետո յերբեմն դուրս էր գնում և աչ էր տուն վերադառնում:

Այդ որերին նա ընկերոջ մեջ պատկերացնում էր իրեն, այն ապագան, վոր սպասում էր իրեն, այն վառվառն ու վեհ գործը, վորին անտարակույս անձնատուր էր լինելու ինքը:

Նա ժամերով սեղանին կռթնած ու ակնապիշ նայելով ընկերոջը, լսում էր նրա պատմածն իր որերի, իր գործերի մասին, այն մասին, ինչպես պետք է



կյանքն ազատել իր խուլ վանդակից և լաջն ճանապարհ դուրս բերել:

Հստակ երևի թվում էր իրեն, վոր այդ ինքն է պատմողը. վոր ընկերը լսում է միայն ու ձգտում է իր լեռնակից գալ, իր յեռակից ընթանալ այն լաջն ու դարդատուն ճանապարհով:

Սակայն անցնում էր միրաժն ու մնում էր ընկերոջ հանդարտ ձայնը, վոր շարունակում էր սկսած խոսքը.

— Միլլոններ է լաջն ուժը, վորն արդեն արթնանալ է սկսել, և հարչուրեն՝ ըր չե, հազարեն՝ ըր չե, վոր պիտի կարողանան զիմանալ ամեն ինչ խորտակող այդ անեղ հորձանքին:

Բուպեններ ելին պատահում, չերբ ըմբոստանալ էր փորձում նրա վողին, բայց բուպեններ ելին դրանք միայն, վոր ակնթարթ պես ճզվում, ճմլվում էլին անտեսական իր բեռան ծանրութունից և տասնչինգ տարիների իր փորինակ լերթից:

Յերկարատեղ չեղան բայց ուրախության այդ ժամերը նրա համար:

Մեկ որ ել, լերբ նա ընկերոջ մոտ գնաց, ծերությունից ու դժվարին կյանքից սմքած նրա մայրն արտասովորով պատմեց, վոր այդ գիշեր վորդուն տարել են ասեղ կարեթով:

Մտաւոր տուն վերադարձավ և մտքերը շարունակ աչտեղ ելին, ընկերոջ հետ ու վերհիշում էր նրա խոսքերը՝ վանդակում փակված կյանքի մասին:

Ապա անհանգստացավ. չէ՞ վոր ինքը հաճախ լեզել է նրա մոտ, տեսել են իրեն նրա հետ:

Ի՞նչ կլինի, քիթ իրեն ել վանդակում փակեն:

Սակայն նրան ձեռք չտվեցին:

Անխուսափելի առոչյան մեկ կողմ վանեց կարճատև ալդ փոփոխությունը նրա կյանքի ու որերն իրենց հունի մեջ մանելով, տարան նրան իրենց հասանքով, միանգամ ընդմիշտ նշած սահանքով:

Նորից տարիներ անցան և հեռավոր մի ջերմագին հուշ դարձավ այն, արդեն մոռացնել տալով փոքրիկ Համիկի պատկերը:

Տարիների ընթացքում նա կորցրեց նրան վորպես կենդանի շարժուն ելակի:

Այն նոր փոփոխություն չկար նրա ներքին աշխարհում և հազվադեպ ելին այլևս անգամ հիշողությունները իր պատանի հասակի:

Կյանքի պտույտի գաղտնի վոլորաններից մեկում արհայտացած ընկերոջ հետ, ասես, փակվեց նրա համար ամեն ինչ, բացի ժամացույցի նման անընդհատ ճըթճըթացող առոչյալից:

Յերկու յեղբայրն արդեն միջնակարգն ավարտել և բարձրագույն ուսման ելին գնացել: Շուտով ավարտելու լեր նաև փոքր յեղբայրը: Իր ուժերն ավելացել էր պաշտոնի բարձրացման հետ: Յեղ թեպետ, հակառակ յեղբայրների կտրուկ մերժման, մասամբ ոտանդակում էր նրանց, ամեն ամիս ճշտապահորեն վորոջ գումար փոխադրելով, բայց և այնպես անտեսական գրությունը բարվոք էր արդեն՝ բավարար ապրելու հաշվով:

Բայց այդ իսկ ժամանակ դարան մտած նոր մի դժբախտություն վրա հասավ:

Մեռավ մայրը:

Մոր մահը ծանր ազդեց վերան: Մայրը, ասես, ան-



խոցելի վահան լինելը իր համար, վոր հոգսերի դաս-  
վորութիւնն իր վրա լեր վերցրել ամբողջութեամբ:

Մոր մահից հետո ուշադրութեան կենտրոնը դար-  
ձավ տանը մնացած միակ լեղբայրը:

Նա լել շուտով գնաց իր ճանապարհը գտնելու:

Յե՛վ լերը աչք բացեց, արդեն բոլորովին միայնակ  
էր:

Քառասունն անց էր, լերը իր միայնակութիւնն  
զգաց:

Չորս պատ, անկողին և ինքը միայնակ:

Կոշմարի սկես ծանր էր չլսել ալլա հարազատնե-  
րից վոչ մեկի ձայնը, չտեսնել նրանց...

Բայց սովորութիւնը բնավորութիւնն է անխախտ:

Բնավորութիւնը հաղթահարեց և նա շարունակեց  
իր առանձնացած կյանքը:

Չուներ ծանոթներ ու բարեկամներ, բացի իր  
պաշտօնակիցները, վորոնց հետ մտերիմ չէր:

Յե՛վ լեղբայրներից ստացած նամակներն էլին, վոր  
յերթեմն ջերմացնում էլին նրա սառը սենյակի լերկ  
պատերը:

Յեղբայրներն ավարտել էլին, բարենպաստ պալ-  
մաններն էլին ստեղծել փոքրի համար մայրաքաղաքի  
համալսարանում:

Յեղբայրներն ալլա իր կարիքը չունե ին:

Առաջին պահ դա տարրինակ թվաց իրեն. տարր-  
րինակ թվաց, վոր իր կարիքը չեն զգում ալլա:

Նույնիսկ վիրավորված զգաց իրեն:

Բայց յեղբայրները յերախառապարտ էլին իրեն,  
նրան էլին պարտական իրենց կյանքի ու հաջողու-  
թիւնների համար:

Սակայն ովքեր էլին նրանք, այդ յեղբայրները,  
նա ալլա չգիտեր:

«Ովքեր են նրանք», — մտածում նա յերթեմն, բայց  
ուրախ էր նրանց նամակներում գրած հաջողութիւն-  
ների համար:

Աշխարհը սասանող որեր յեկան, բայց այդ որե-  
րը նրա կողքով անցան:

Ատյանում գրադրութեան բովանդակութիւնը փոխ-  
վեց, հաճախ ու համառ էլին դառնում «պատերազմ»,  
«հայրենիք», «թշնամի» բառերն ու դարձվածքները:

Սակայն դրանք առանձին եֆֆեկտ չէին դառնում  
նրա համար. նա շարունակում էր իր աշխատանքը  
մի անգամ ընդմիջտ լարած մեքենայի նման, մինչև  
անխնայի առամների մաշվելը:

Սասանիչ որերի ծանրութիւնն այն ժամանակ մի-  
այն զգաց, լերը յեղբայրների նամակներն սկսեցին  
գործող բանակներից գալ:

Ամենից ավելի մտահոգութիւնն էր պատճառում  
փոքրի վիճակը, վորն առաջավոր դիրքերում էր՝  
վորպես շարքային գինվոր և վորի մասին մեծ լեղ-  
բոր նամակներում անհանգիստ տողեր էլին լինում,  
ինչ վոր իր համար վոչ այնչափ պարզ ակնարկներ-  
ակնարկներ, վորոնց իմաստը նույնանման էլին ան-  
հայտացած ընկերոջ ձգտումներին:

Ահեղ այդ տարիներն առանց շտապելու, ասես  
իրենք իրենցով հմայված, ծայրահեղորեն դանդաղ  
էլին կատարում իրենց շրջադարձը:

Ամեն ինչ փոխվեց, խառնվեց, դարձավ իր համար  
անիմանալի, անհասկանալի:

Յե՛վ ժամանակը, ասես, թափ առավ, անզուսպ ու



սրընթաց նստույդ հեծած, վոր կրծում եր պրկող սան-  
ձի յերկաթյա ողբեր, բերանին դրած և ուժգին դո-  
փում եր գետինը, տասնյակ տարիների անխախտ ըն-  
թացքում կարծրացած գետինը:

Ամպի նման փոշի կանգնեց ու կայծեր տեղացին  
հորդահոս անձրեվի նման և յիրբ հանդարտեց ամեն  
ինչ ու արեգակը շողաց ջերմառատ, տարորինակ  
թվաց նրան, վոր որեք և որեք շարունակ իր տեսած  
ու ապրած արտաքին շուքն ու փայլը չկա այլևս:

3

Աշխատում եր արխիվում:

Աշխատանքի յերկար տարիների բեռ ունենալու  
համար, առաջարկվեց հանդստի զնալ՝ ապահովելով  
կենսաթոշակով, սակայն հրաժարվեց.

— Ի՞նչ եմ անելու տանը, չորս պատի մեջ, դեռ  
կարող եմ աշխատել:

Արխիվում համակարգում եր անցյալից մնացած  
հասարակական-քաղաքական նշանակության գործերն  
ըստ խնդիրների և անձնավորութունների:

Հասարակ փոքրիկ մի սեղանի վրա խոնարհված,  
տարիների փոշիներով ծածկված՝ թղթերի կապուկներն  
եղ թերթում ու կարգում արդեն ակնոցավորած աչ-  
քերով:

Այդ որը ժանդարմական վարչության գործերն  
եր ցուցակագրում:

Չախ ձեռքը մեքենայորեն սեղանի անկյունի կոշ-  
տից վերցնում և մոտեցնում եր գործը, իսկ աջն իր  
հավասար, գրագրին հատուկ ձեռագրով գրանցում եր  
առչկի մատչանում, իր համապատասխան նշումներով:

Չախ ձեռքը մոտ բերեց մի գործ՝ կապույտ՝ հաստ

շապիկով, սակայն այս անգամ աջը չշարժվեց դեպի  
մատչանը և գրչակոթը ինքնաբերաբար դուրս ընկավ  
մատների միջից:

Չնալատաց աչքերին, դուրսն ավելի խոնարհեց,  
ակնոցը շարժեց քթի վրա, ասես ավելի ուժեղացնելու  
տեսողությունը:

Կապույտ շապիկի միջին մասում հաստ ու հատուկ  
խնամքով դրված եր.

«Գործ № 17 ..

«Ազգանուն. Արշակյան

«Անուն-հայրանուն. Համայակ Գալուստի

«Սկսված. 19 .. թվի, Մայիսի 2-ին

«Վերջացած. 19... թվի դեկտեմբերի 27-ին»:

Դա նրա գործն եր, իր ընկերոջ, իր միակ ընկերոջ  
գործը:

Առջևի թղթերը շտապելով ու անհամբեր մի կողմ  
հրեց և № 17.. գործը քաշեց առաջը:

«Գտն, գտն վերջապես» - մտածեց:

Ու ժպտաց ներքին անխառն ուրախությամբ:

«Ախ դու անպիտան զքեզ, այժմ տեղդ կլիմանամ»-  
աստեց նրան մտքում:

Ինչպես կուզեր տեսնել նրան, ելի են տարվա  
նման յերկար լսել նրա վոգեվորված խոսքերը:

«Ո, — հիմի ինչ մեծ մարդ ե դառել, — կրկին անցավ  
մտքով իր վաղուց ստեղծած համոզված կարծիքը նրա  
մասին:

Բացեց առաջին թերթը:

Ահա նրա նկարը. յերկուսը, մեկը դիմանկարը  
կողքից, մյուսը ամբողջ՝ դիմացից, անկյուններում  
կնիքներ, մակագրութուններ:

60252.67





Յեվ նկարագրութունն դիմագծերի, մազերի դու յնի, տարիքը, մեղադրվելու հիմունքը...

Անդորր այդ դեմքը մտազրաղ հայացքով...

Թաշկինակի ծայրով մաքրեց ականոցի ապակիները, ծածկեց, ուշադիր գննելով նրա նկարները:

Թվաց, վոր անշունչ նկարը կենդանացավ մի ակընթարթ և իր բարակ շրթունքներով ժպտաց նա իրեն ու գլխով արեց:

Թերթեց:

Վոստրիկանապետի զեկուցումը խաղաղ մաշտով կայի ժամանակ հակապետական գրգռիչ ճառ արտասանելու մասին:

Նոր եյին աչքերը սահել զեկուցման առաջին սողերի վրայով, լերբ շուռ տվեց գործը և վերջին չերեսը բացեց:

Մի քանի տող եր միայն վերջին թերթը, վորոնք ազահաբար կուլ տվեց հայացքով և ասես՝ քարացավ աթոռին:

«...Հետապնդող զինվորի կողմից գնդակահարվեց, տեղն ու տեղը մահանալով, — վերջանում եր հաղորդագրութունը հեռավոր Սիբիրից:

Մթափվեց հատակին ընկած գործի թխկոցից, վոր կամացուկ ազատվելով ձեռքից, սահեց ծնկներին, ապա դանդաղորեն իջավ ցած, անկյունով կպչելով հատակին:

Բարձրացրեց հատակից, դրեց սեղանին ու խորասուզվեց ընթերցման մեջ՝ սկզբից:

Տարիների դործ եր դա՛ հմտորեն թագնված հեղափոխական ծավալուն գործունեյութուն ունեցող մի մարդու յուրաքանչյուր քայլափոխը հետապնդող, վորը

մի կողմից հայտաբերում եր այդ հսկայական ապարատի բաղմաթիվ, ամենահեռավոր անկյունների ձգվող շոշափուկները գոյութունը, մյուս կողմից ցուցադրում եր այդ շոշափուկների ծայրահեղ տիմարութունը, նրանց կատարյալ բթութունը:

Տեղից-տեղ, քաղաքից-քաղաք, ասես մոգական դավազանով հայտնվում ե նա, թագնված ուրիշ անվան տակ և աներեվութանում ե վորպես աչքախիս, և ահա խաղաղ պայմաններում հայտնվում ե ինքն Արշակյանը, իր բժշկի պրոֆեսիայով կենտրոնական քաղաքում, միշտ յենթադրութունների, միշտ կապակածների ցանցով ողակված:

Շոշափուկների հետապնդումները մինչ այդ ապարդյուն են անցնում նույնացնելու նրանց, այդ չերկու անձնավորութուններին, հակառակ իրենց անխոնջ ջանքերին:

Ահա և այն տարին, իրենց հանդիպման տարին:

Կարճ հաղորդագրութամբ տեղեկացվում ե Արշակյանի իր հայրենի քաղաքը մեկնելու մասին, ապա կարգադրութուն՝ հսկողության տակ պահելու հատուկ գործակալների միջոցով, բայց վոչ ակնհայտին:

Յեվս մի քանի հաղորդագրութուն նրան հսկող գործակալներից նրա կամ այն որվա մանրամասն նկարագրութամբ, բոլորն ել վոչ մի առանձին արժեք չներկայացնող, բաղմաթիվ մարդկանց սովորական որերի նման առորյայի ժամանակադրութունը:

Հաջորդը չերկար ե, չերկու մեծագիր եջ՝ անմիջականորեն ժանդարմական վարչության պետին հասցեագրված:

Հոգնած ե ծերունին, սակայն իր ամբողջ կյանքի



միակ ընկերոջ անցած ճանապարհի պաշտոնական այդ կծիկը քանդելու մղումը մոռացնել և տալիս նրան հասակից բլխող իր հոգնութիւնը:

Յեզ կրկին խորատուվում է գործի ընթերցման մեջ:

... Յեթե մեկն ու մեկն ասեր նրան այդ մասին, նա չար կատակ կհամարեր դա և ընդմիջտ լերես կդարձնե նրանից:

Բայց նա կարդում էր իր սեփական աչքերով, իրեն շատ լավ ծանոթ մարդու գրածը, կարդում էր անժխտելի փաստի, կատարված, տեղի ունեցած փաստի մասին...

«... չե՞րբ ընթերիքի ընթացքում տրամադրութիւնն արդեն բավական բարձր աստիճանի լիք բարձրացել, յետ նույն այդ Մուրադովին լավագուշն բարեկամ ձեզացա, նրան պաշտոնում բարձրացնելու արատ խոստումներ տվի, իմանալով, վոր նա խիստ հեղ վիճակի մեջ է գտնվում և պաշտոնում բարձրացնելու հանդամանքը նրան ամենից շուտ կարող է լավ արամադրել դեպի ինձ:

«Իմ մանչուլը հաջողվեց և ի միջև այլոց կամ զանազան համեմատումներով առաջարկված հարցերի միջոցով պարզվեց, վոր նրա բարեկամ Արշակյանը նույն այն «Սեզյանն» է, հակապետական հանցագործ մտադրութիւններով: Իմ նոր «բարեկամը» վորդավորված պատմեց նրա ծրագրերի և նպատակների մասին, վորոնցով ինքն էլ վարակված է լերելում, և հաստատեց, վոր Արշակյանն իր ներկայութեամբ նույն այն անունով գաղտնի ծրար է ստացել ինչ վոր անծանոթ մեկի միջոցով, յերեկ յերեկոյան ուշ ժամանակ...»

«...հաղորդելով այս մասին ձերը բարեկամութեան,

խոնարարար խնդրում եմ, իմ հավատարիմ ծառայութիւնս աչքի առաջ ունենալով, հավիտյանս բարերար դառնաք ինձ ու իմ ընտանիքին, ավելացնեք իմ ոռճիկը, վորովհետև գործի հանգամանքով ծախսեր անելու հարկավորութիւն է լինում:

Մուխա:

Յեզ վերջում պետի մակադրութիւնը, ըստ յերելութիւն արհամարհական տրամադրութեամբ գրված. «Տալ 5 մանեթ ծախսերի դիմաց»:

Տարորինակ, թմրութեան հասնող անդորր էր իջել ծերունու վրա, վոր անթարթ, բայց չտեսնող հայացքը գործի թերթին հառած, մնացել էր անշարժ:

Յերբ արխիվի սենյակներում աշխատանքի ժամը վերջանալուն հատուկ աշխուժութիւն տիրեց, նա սթափվեց, հանդարտ բարձրացավ տեղից, ծածկեց առջեկում բաց դրված գործը, միացրեց մշուսներին, դասավորեց ըստ համարների և տեղավորեց իր հատուկ դարակում: Ապա հավաքեց սեղանի վրա յեղած մատյանները սեղանի արկղում, այնտեղ դրեց գրչակոթն ու մատիաները՝ սև և գունավոր, ներս հրեց արկղը և պատի անկուռում դրված ձեռնափայտը վերցնելով, դանդաղաքալ դուրս գնաց, իր սովորական ցտեսութիւնն ասելով պաշտոնակիցներին:

Այդ որ սովորականից ուշ տուն հասավ:

Չիր էլ շտապում:

Սակայն ուղեղում քալերը դանդաղեցնող մտքեր էլ չկային:

Հասավ տուն:

Ամեն որ տուն գալուց հետո անմիջապես գնում էր մոտիկ կրպակից իր բաժին հացն ստանալու:

Սովորականի նման ձեռքը պարզեց սեղանի վրա-



յից հացի քարտը վերցնելու, բայց ձեռքը կես ճանապարհին կանգ առավ:

Հետո, ասես, մոռացավ:

Հանեց գլխարկը, կախեց տարիներ շարունակ նույն առի խփված փայտե հասարակ կախարանից, ձեռնափայտը դրեց անկյունում, մոտեցավ աթոռին նստելու, բայց առաջ անցավ, նստեց մահճակալին:

Փայտե մահճակալը ճոռաց ու սուս արեց:

Մեկ էլ ճոռաց պլեյլ չերկարասե, չերբ ձերուկը մեկնվեց նրա վրա և մեջքին պռակած, անորոշ հայացքը հռոեց անձրևվաշրից գոյացած սեվավուն խալերով ծածկված առաստաղին:

## 4

Յերբ արթնացավ, արդեն մութն էր:

Սկզբում չկարողացավ վորոշել ժամանակը, թվաց, վոր դեռ չի լուսացել, ուզեց շուռ գալ կողքի, բայց զգաց, վոր հագուստով ե ու հասկացավ միայն չերեկո վինելը:

Վեր կացավ:

Քաղց չեր զգում և վոչ էլ լույսի կարիք էր զգում:

Հանկարծ հախուռն կերպով վերահանգնվեց անցյալն իր միապաղաղությամբ ու միալար դանդաղ ընթացքով, և մի կես, մի պատահական եպիզոդ իր աննշան կյանքից քարացած կանգ առավ առաջը:

Սեղանի վրա աշխատանքային որվա ընթացքում կուտակված թղթերը դասավորելուց և պահարանում փակելուց հետո, դուրս լեկավ գրասենյակից, մոտեցավ կախարանին, վերցրեց գլխարկն ու առաջ ան-

ցավ իջնելու աստիճաններից, չերբ լետելից կանչեցին.

— Սպասեցեք մի րոպե, լես էլ եմ գալիս:

Յետ նայեց. դիմանատան պետն էր, աստիճանով իրենից ստորին պաշտոնյաների հոգեառը, վոր կախարանի մոտ բարապանի պահած գարնանային թեթև վերարկուն հագած, մեծ հայլու առաջ համազգեստի ոձիքն էր ուղղում:

Բավական տարրերնակ թվաց, վոր նա, Յակով Իլլարյոնիչը այդպիսի ցանկություն հայտնեց իր նման փոքրիկ մի պաշտոնյալի նկատմամբ:

Սպասեց մինչև նրա գալն՝ աստիճանների գլխին կանգնած: Քայլում էին սկզբում լուռ, հետո Յակով Իլլարյոնիչը հետաքրքրվեց նրա ընտանեկան դրուժյամբ:

Պատասխանում էր հարցերին կարճ, քաշված, ինչպես ստորադրյալն իշխանավորին և չեր կարողանում հասկանալ իշխանավորի միտքը:

Իսկ Յակով Իլլարյոնիչը, վորը գրասենյակում կարող պաշտոնական կարճ բառերից ու հրամաններից զատ վոչ մի լավելորդ բառ չեր արտասանում, զարմանալի շաղակրատն էր դառել:

Ոստում էր ծնողասիրության, վորդիական պարտականությունների մասին, ասես իր առաջ մի պատանի չեր գտնվում և վոչ թե կյանքի պատահարներից արդեն ճնշված, գրասենյակում տարիներ շարունակ մեջք խոնարհած չերեսունն անց հատուն մի մարդու հետ՝ իր կաղապարված, կայունացած ընավորությամբ:

— Այդ բոլորը լավ, շատ լավ — մինչ այդ շարունակում էր իր խոսքը Յակով Իլլարյոնիչը, — բայց մարդս ինքն իր մասին էլ պետք է մտածի, ինքն



իրեն եւ չպիտի մոռննա, պետք է գնա, գա, հասարակութեան մեջ լինի, պետք է շփում ունենա:

Շփումից բան դուրս կգա, — շեշտեց նա, անգամ մի ակնթարթ կանգ առնելով և կլիսադառնալով նրա կողմը:

Հասել ելին արդեն փողոցների խաչակապուղիներին, վորտեղից թեքվելու վեր իր տան կողմը, սակայն անհարմար զգաց հրաժեշտ տար:

«Ինչ կարող ե վրավորվի», մտածեց ու շարունակեց քայլել նրա հետ, բոլորովին հակառակ ուղղութեամբ, դեպի գլխավոր փողոցը:

Իր տան դռան առաջ Յակով Իլլարցոնիչը կանգ առավ:

— Այդպես, այդպես սիրելիս, — ասաց ու ձեռքը պարզեց:

Մի տարրերնակութուն, վոր չերբեք սպասելի չէր: Մյուս տարրերնակութունը պատահեց, յերբ նա բռնելով իր ստորագրյալի անվտան մեկնած ձեռքը շատ սիրալիր հարց տվեց:

— Այս չերկո ազմա եք:

Իրական պատասխան ստանալով, առանց ձեռքը բաց թողնելու, Յակով Իլլարցոնիչը անուշ ժպիտով առաջարկեց,

— Այդ դեպքում չերեկոյան հոմեցեք ինձ մոտ, ժամանակ կանցկացնենք:

Շնորհակալութեամբ հալտնված մերժումը չընդունեց կտրուկ:

— Վոչ, վոչ, անպայման կսպասեմ, ասանց հակաճառութեան:

Յեվ ամուր սեղմեց ձեռքը:

Տուն վերադարձալ ուրախ տրամադրութեամբ. չէր իր պեան եր հրավերողը:

Անսպասելի առ լուրը բարձրացրեց նաև տնեցիների տրամադրութեանը:

Մայրը նույնիսկ կատակեց.

— Յերեվի ուզում ե աղջկան վրադ սաղացնի:

Իսկ փոքր յեղբայրը դուշակեց.

— Յեղբոր պաշտունը կրարձրանա:

Սակայն յերբ գնալու ժամը հասավ, նա դժկամակեց:

Բայց պետին բարկացնելուց զգուշանալով, պատասխանեց գնալու:

Հնարավորին չափ մաքրեց ու կարգի բերեց համազգեստը և ժամանակին անվտան սեղմեց Յակով Իլլարցոնիչի բնակարանի դռնի կոճակը:

Առախինը նախազգուշացված եր ըստ չերեկույթին, անմիջապես ներս հրավերեց, իսկ դռան շեմքին դիմավորեց ինքը Յակով Իլլարցոնիչը:

— Համեցեք, համեցեք... Մնչա, ինքնալուր...

Անհարմար եր զգում իրեն ու մտահոգված եր, թե ինչպես պիտի վողջունի և ինչ պիտի ասի Յակով Իլլարցոնիչի կնոջն ու նրա յերկու արդեն հասուն աղջիկներին:

Բայց սենյակում վոչ վոք չկար:

«Գուցե հետո դուրս կգան» — մտածեց, աչքի տակով նայելով մյուս սենյակները տանող դռանը:

Յակով Իլլարցոնիչը վորսաց նրա հայացքն ու հասկացավ:

— Մերոնք տանը չեն, հրավիրված են հյուր: Յես չուզեցի գնալ: Ձեզ հետ ինձ համար ավելի հաճելի չե:



Մի պահ տարրորինակ թվաց և ականալից հիշեց մոր կատակը, սակայն իրեն ավելի թեթեւացած զգաց, ծանր մի պարտականութիւն կատարելուց ազատված լինելով:

Մաշան ներս բերեց ինքնաշեռը և զբաղվեց թելի պատրաստութեամբ, թելի պարագաների հետ միասին սեղանի վրա դնելով ողու սրվակը և սառն ուտելիքներ:

Յակով Իլլարյոնիչն աթոռը մոտեցնելով սեղանին, հրավիրեց նստել, ինքն ել նստելով դիմացը, ապա դարձավ աղանչին, վորը կամենում եր թիչ լցնել:

— Թեյը դեռ թող, ինքններս կլցնենք հետո: Դու կարող ես գնար:

Խմիչք չեւ գործածում, բայց հեռավոր չեղավ մերժել:

«Չվերափորվի հանկարծ մերժումից», — անցավ չերկուդով:

Հաջորդող գավաթներից զվարթացավ, նախկին չերկչոտութիւնը մասամբ անցավ, ավելի ազատ զգաց իրեն:

Խոսքը դարձավ ծանոթների, մտերիմների շուրջ: Ծանոթներ, մտերիմներ — նա չունի այդպիսիները, բացի իր պաշտոնակիցներից, վորոնց, սակայն, մտերիմ համարել չի կարող:

Բայց վոչ, նա ունի մի շատ լավ ծանոթ, շատ մտերիմ մեկը: Դա իր նախկին դասընկերն է, մի լավ տղա: Համալսարան է ավարտել, հիանալի մարդ է դարձել... Արշակյանը:

— Արշակյան, — ծոր տվեց Յակով Իլլարյոնիչը, գավաթները նորից լցնելով ու մի կտոր տապակած

միս մատուցելով: Վոչ, այդպիսի մարդ չեմ ճանաչում: Ո՞վ է:

Վերավորական թվաց, վոր կան մարդիկ, վորոնք չեն ճանաչում Արշակյանին և հարցնում են նրա մասին — ո՞վ է:

— Արշակյանը, — ներքին հպարտութեամբ ասաց նա. հանկարծ աչքն առավ ինքնաշեռին, վորի սպիտակ պլպլան կողքին անդրադարձել եր Յակով Իլլարյոնիչի դեմքը այլանդակորեն չերկարած, ասես նկարչի քմահաճ մատիտով ծամածոված: Յեւ այդ հանգամանքը բուռն ցանկութիւն հորդեց նրա մեջ իրականում այլանդակված, ազճատված տեսնել իր դիմաց նստած մարդու դեմքը:

— Արշակյանը, — կրկնեց նա, մի ումպով դատարկելով գավաթը և ուժգնորեն նստելով սոսկալի աջն բառը: վորից պիտի դողահար լինեւր նա: — Արշակյանը հեղափոխական է:

Բայց Յակով Իլլարյոնիչի դեմքը չցնցվեց, ընդհակառակը, նա վողեւորվեց, գավաթը վեր բարձրացրեց և ձոնեց հեղափոխականների կենացին:

Հետո խոսքերը պտտեցին քաղաքականութեան շուրջը:

Ի՞նչ գիտեք ինքը. վոչինչ, համարչա վոչինչ, բացի իր լսածներից, վորոնք վորչափ պարզ ու հասկանալի ելին լսած ժամանակ, նույնքան կցկտուր և դժվարին ելին արտահայտելիս:

Յակով Իլարյոնիչն ավելին գիտեր, շատ բառեր նուսն ելին, ինչ վոր լսել եր իր ընկերոջ մտերիմ զրույցների ժամանակ:



Ավելին. Յակով Իլլարցոնիչը սիրում էր հեղափոխականներին, նրանց գաղտնի համակրող էր:

— Այո, չես սիրում եմ այդ համարձակ մարդկանց: Նրա դեմքն անուշ էր, պարզ, չկար այլևս գրասենյակի խստությունը, կիտված հոնքերը:— Յես սիրում եմ քո Արշականին, չեթե նա չէլ այդպիսին է, բայց կա մեկը, վորին չես ավելի չեմ սիրում. դա Սեվյանն է: Յերիվի դու չես բեկ նրա մասին:

Ծիծաղեց: Չէր լսել: Նա ճանաչում էր, շատ լավ էր ճանաչում այդ համարձակ մարդուն:

— Սեվյանը... Սեվյանը դա հենց ինքը Արշականն է,— ասաց, բայց անմիջապես ընդհատեց, ասես անբեկույթ մի ձեռք փակեց բերանը:

Բայց մի ակնթարթ, մի աննշան ակնթարթ տևեց դա, մտաբերելով ընկերոջ խիստ նախազգուշացումն՝ այդ մասին վոչ վոքի չերբեք չասել, չերբ ինքը պատահմամբ ներկա գտնվեց այդ հասցեչով իրեն հանձնված ծրարին:

Նախազգուշացնող այդ ակնթարթը սակայն, ընկալ գավաթի հատակին, տարբալուծվեց ողու ներգործությունից ու ցնդեց սեղանատան շոգ ողում, պտուշտ գործելով հանկարծ ինքնայեռի վերև:

Ուշ վերադարձավ տուն. մայրը դեռ նստած սպասում էր:

Մշուս որը գլուխը սաստիկ ցավում էր և աշխատանքից հետո տուն վերադառնալով, անմիջապես անկողին մտավ:

Իսկ յերկրորդ որը չերեկոյան, չերբ ընկերոջ մոտ գնաց, նա այլևս չկար և նրան դիմափորեց նրա ծեբացած մայրը, արտասովոր աչքերով:

Հաջորդ առավոտյան ուշ արթնացավ: Քնել էր հենց այդպես ավթոռին նստած, գլուխը սեղանին դրած, թևին կռթնած:

Առաջին միտքը չեղավ շտապել աշխատանքի, բայց չերբ ձեռնափայտն էր վերցնում, կանգ առավ:

— Ինչո՞ւ,— հարց տվեց ինքն իրեն բարձրաձայն. պատասխան չգտնելով, ձեռնափայտը անղը դրեց ու սկսեց դանդաղ քայլել սենյակում մի պատից մյուսը: Քաղց զգաց. պահարանում վոչինչ չկար:

Սեղանի վերայից վերցրեց հացի քարտն ու դուրս գնաց: Քիչ հետո վերադառնալով, բերած հացից կերավ մի կտոր:

Սեղանի մոտ նստած ծածում էր հացը, իսկ քառասունհինգ տարի սովոր ձեռքը մեքենայորեն գրում էր հացի քարտի վրա.

„Յես վատնեցի...“

„Յես սպանեցի...“

„Արշակյան... Սեվյան...“

„Մոխա... Յակով Իլլարցոնիչ...“

„Մատնեցի... Մատնիչ... մատնիչ...“

„Սպանեցի... իմ ձեռքով սպանեցի...“

„Պարծնում ելի նրանով... Հպարտանում ելի... ինձ ելին տեսնում նրա մեջ:“

„Յես, չես նուչնպես... Բայց սպանեցի...“

„Ձուների մեջ... ծառերի տակ... Արյունը ներկեց ձյունը...“

Հայացքը թափառում էր քարտի վրա, տառերի տակից չերկացող օրվա տպագիր թվերին, կանգ էր



առնում դիմացի պատին, պտույտ եր գործում, իջնում եր, բարձրանում, բայց, ասես, վոչինչ չեր տեսնում, ասես տեսողութեան նշարը զատվել եր ուղեղից և ապրում եր իր ուրույն կյանքով, դիտակցութեան հետ վոչ մի կապ չունենալով:

Մսկ ձեռքը դանդաղ շուռ տվեց թերթը, և բառերը, կրկնվող, անկապ, սակայն ընդհանուր մի կենտրոնից բղխած բառերն ինքնարեքար շարվում ելին թղթի փոքրիկ այդ կտորի վրա:

Հանկարծ տեսողութեան նշարը ներփակվեցին, մատիարը ցած գլորվեց և նա սարսափահար վեր թռավ տեղից, լայն բացած աչքերը թղթին հառած:

— Վսչ, — գոչեց նա, ասես պատասխանելով մեկի անողորմ հարցին և թափով չիտ հրեց թուղթը:

Թղթի հպումից սթափվեց և հակված դլխով շշնջաց կամայցուկ:

— Այո...

Յերեկոցան կողմ ուժերը դավաճանեցին. գլուխը պտույտ եր գալիս և ընդհանուր թուլութուն եր զգում մարմնում:

Սառը, մանր ու ծակող դողից փշաքաղվում եր անկողնում կծկված մարմինը:

Հետո դուրեկան ջերմութուն պատեց. թեթեւութուն զգաց և պարզեց կծկված վտտքերը:

Ու դիմացի պատին, վորպես լուսարգելի վրա, պատկերներ սկսեցին շարժվել, մերթ դանդաղ, մերթ արագ, շտապով:

Ահա դասարանը: Դեռ դաս չի սկսված և աշակերտները խռնված են նստարանի մոտ: Կասատուն ուշանում եր: Հանկարծ առաջ ե նետվում Համիկը և շատ

լուրջ դեմքով ձեծում և ամբիոնը ձեռքով՝ լուռթյուն պահպանելու: Աշակերտները չգիտեն բանն ինչու՞ն է, զարմանում են և զարմանքից լուռթյուն ե տիրում: Ու տեսնում են Համիկին Ֆիզիկայի դասատուին նմանեցնելով, ցրված մտեծում ե դրատախտակին: Այնքան նման ե քայլվածքն ու թափառուն հայացքը, վոր աշակերտները անասելի քրքիջ են բարձրացնում: Այդ իսկ բոսկիլին մանում ե դասատուն: Բոլորը ակնթարթապես լուռմ են ու շտապում են իրենց տեղերը գրավել, իսկ Համիկը, ասես վոչինչ չի պատահել, հանգիստ ու լուրջ իր տեղն ե դնում ծանրաքայլ: Նրա այդ լրջութունն այնքան ե կոմիկական, վոր ընկերները հաղիվ են դսպում փռթկոցը:

Նայում ե պատի վրա դանդաղ շարժվող ընկերոջը և ջերմ մի ժպիտ ե սահում դեմքով ու քարանում ե օյնտեղ ընդմիջա:

Յերկրորդ որը միայն արխիվում նկատում են նրա բացակայութունը և շատ տարորինակ ե թվում այդ: Վարիչի կարգադրութեամբ աշխատակիցներից մեկը դնում ե ստուգելու բացակայութեան պատճառը և տրտում վերադառնալով, նրա մահվան լուրն ե բերում պաշտոնակիցներին:

Կատարված քննութունը նրան անպարտ ե ճանաչում, իսկ Յակով Իլարյոնիչը մի քանի ամիս առաջ միայն մշտական հրաժեշտ ե տված լինում աշխարհին՝ փողային լերաժշտութեան մեղամաղձիկ նվագի ուղեկցութեամբ, իր մահկանացուն կնքելով վորպես աշխատանքի թոշակատու:



## Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ւ Մ

### 1

Որերը մեկի-մեկիկ շարվում են մեկը մյուսի վրա, ինչպես հատիկները հասկի, և խուրձեր կազմելով, պառկում են կյանքի շտեմարանում:

Որերը հաջորդում են միմյանց և ամեն անգամ բերում են նոր մի բան, կյանքի նոր մի մասնիկ:

Որերը չեն կրկնվում:

Որերի այդ ընթացքում հյուսվում է մարդու կյանքը իր համար աննկատելի, անխզելի կապվելով չ'ընկալվողների ու պայմանների հետ, վորպես մի միասնություն: Յեվ դառնում է սովորությունների մի շաբան, չերբ նորն ու հինը անորոշելի միախառնվում են, միաձուլվում: Ու մնում է սովորությունը, փոխարինելով որերին, իսկ որը դառնում է ժամանակաչափ՝ մարդկային կյանքի սկիզբն ու վախճանը սահմանելու համար:

Սովորությունների այդպիսի շարանով եր ձեակերպվել դեպի հեռավոր մեծ քաղաքները տանող յերկաթուղային զծամասի պահպան Պետրոս ամու կյանքը:

Լայնանիստ ու բարձր բլուրների լեռն—բավական հեռու տարածված գյուղում քիչ ձերուներներ ելին հի-

---

Ծանոթություն.—Այս եսկիզի թիման մասամբ փոխ է արե-  
ված ուրիշից:



շում, ինչպես մեկ որ գարնան սկզբին գնացքն առաջին անգամ բարձր սուլեց և անսպասելի կանգ առավ գծի այդ ամալի մասում: Այն ժամանակ իրենք դեռ յերիտասարդ ելին և դաշտ ելին դուրս յեկեկ գարնանավար անելու: Այդ անսպասելի հանգամանքից հետաքրքրված, թողեցին իրենց աշխատանքն ու միմյանց ձայն տալով, վազելով յեկան տեսնելու ինչ ե պատահել: Յերբ նրանք հեվիհեվ հասան, գնացքն ուժգին սուլեց ու կրկին սրընթաց առաջ անցավ, իսկ գծի մոտ կանգնած եր մի մարդ իր ընտանիքի և իրերի հետ, վոր կարծես տրամությամբ նայում եր հեռացող գնացքի յետևից:

Հետո այդ մարդը ընակվեց յերկաթգծից քիչ հեռու, դեպի բլրակողմը շինված սպիտակ տնակում:

Սկզբում գլուղացիները չեյին կարողանում հասկանալ, ինչու չե այդ մարդը ընտանիքն առած մենավոր ծառի պես ապրում այդ հեռու ընկած ամալի դաշտում: Հազար ու մի յենթադրություններ եյին անում, ադաջին որերին նույնիսկ կասկած եյին հալտնում՝ արդյոք այդ բանը վորևե փորձանք չի բերելու իրենց գլխին, թեպես գլուղը գծից հեռու յեր գտընվում և միայն դաշտերն եյին իրենց փեշերը քսում գծաթմբին:

Սկսեցին միառժամանակ հետևել նորեկին, սակայն շուտով հանգստացան:

Սմենից ավելի հետաքրքրվում եյին գլուղի փոքրիկները, վորոնք ամեն անգամ առիթը բաց չեյին թողնում, բավական յերկար ճանապարհ կտրելով, «պոհզգի» անցները դիտելու: Յեվ տեսնելով ինչպես նորեկն ամեն անգամ կանաչ դրոշակը ձեռքին դիմա-

վորում ե յեկող-գնացող գնացքները, նրան անբաժանելի կերպով նույնացրին յերկաթուղու հետ, անվանելով վաչ այլ կերպ, քան «պոհզգի ամի»:

Պոչեզգի ամի—այդ անունով ճանաչեցին նրան այնուհետև բոլորը և տարիների ընթացքում այդ մականունը այնպես ամրապնդվեց նրան, վոր շատերը նույն իսկ մոռացության տվեցին նրա իսկական անունը:

Նրա պարտականութունն եր հսկել իր գծամասի կանոնավորության և ցերեկը դրոշակով, գլշերը լապտերով ազգանշան տալ մեքենավարին ճանապարհի դրության մասին:

Վաղ առավոտյան դուրս եր դալին, անցնում եր իր գծամասով սկզբում մեկ, ապա մշուս կողմը, ստուգում եր՝ չկան արդյոք փչացած, գնացքին վտանգ սպառնացող տեղեր, ստուգում եր կցման պտուտակները, ամրացնում եր, յեթե պատահում եր թուլացածներ, ուլտերի վրայից հեռացնում եր բլուրներից դլորված, ընկած քարերը, լցնում եր փոս ընկած կոճերի տակը, իսկ ձմեռ ժամանակ մաքրում եր այս ու այնտեղ կուտակված ձյունը, յեթե այդպիսիք վտանգ կարող եյին առաջացնել:

Չափազանց զգաստ եր իր պարտականության. լավ եր գիտակցում, վոր անցնող-դարձող գնացքների նրանց մեջ դանվող ճանապարհորդների բաղդը այդ գծամասում իր ձեռքում ե դտնվում, կախված եր իր աշալուրջ ինչելուց:

Չմեռն անընդհատ իջնող ձյունին, կամ բուք ու բորանին, գարնանը հորդահոս անձրևին ու բլուրներից առատորեն ցած խուժող ջրերի տարափին նա միշտ ստուգում եր իր ուղեմասը, առավել այդպիսի որերին,



յերբ անակնկալ վտանգն ավելի հավանական է, ավելի հնարավոր:

Յեւ միշտ կանաչ դրոշակ կամ կանաչ լապտեր եր պարզել, վորպես ազդանշան, ու մեքենավարները, նախելով կանաչ գույնին, անցել էյին ապահով, անցել էյին, վստահ Պոեղդի ամու աչալըջուլթյան:

Առաջին տարուն հաջորդել եր լերկրորդը, հետո մյուսը, ելի մյուսը, կրկին ու կրկին և այդպես շատ ու շատ տարիներ, շատ ու շատ ձմեռներ ու գարուններ, աշուններ ու ամառներ:

Կնոջ աշխատակցությամբ լերկաթգծի համար ոտաբացված մի նեղ շերտ հողամասում տնտեսություն եր հիմնել. արմախքներ եր ցանում՝ գետնախնձոր, ճակընդեղ, խակ մի մասում էլ բանջարանոց եր. ցանում եր լոբի, կաղամբ, կանաչեղեն: Բնակված տունը մասամբ ուներ անհրաժեշտ յենթաշենքեր, ինքն էլ ժամանակի ընթացքում ավելացրել եր, հարմարեցրել ու ձեռք եր բերել, բազմացրել եր հավեր, մի քանի վոչխար, մի կով:

Ապրում եր բավարար ընտանիքը կարոտություն չեր քաշում:

Տարիների հետ ընտանիքը մեծացել եր, տնտեսությունն ամրապնդվել, հարևան գյուղացիների հետ բարեկամական-դրացիական կապեր եր հաստատել:

Սակայն և տարիների հետ ընտանիքը քայքայվել եր, փոքրացել, խակ տնտեսությունն ալլես պետք չլինելու հետևանքով, վոչնչացել:

Այժմ մնացել եր ինքն ու բանջարանոցը և փոքր վորդին, վոր սովորում եր հեռավոր քաղաքում, վորտեղից գալիս եր իր դժամասով անցնող գնացքը և

ուր գնում էյին իր գծամասով անցնող գնացքները:

Համաշխարհային արհավիրքը տարածեց իր թաթեբլբլ, սողաց ամեն կողմ, հեռավոր այդ ամայության մեջ գտավ Պոեղդի ամուն, խլեց նրա մեծ վորդուն:

Ծանրության այդ բեռից կքեց նա, ավելի ծերացավ և ամեն անգամ հիշելիս մի մեծ դառը գունդ ասես դեմ եր առնում նրա կոկորդին, խեղդում եր, արգելում եր շնչառությունը:

Լինում էյին ըոպեններ, յերբ ծերունին սուր ատելություն եր տածում դեպի իր դիմավորած գնացքները, վորոնք այնպես անվրդով անցնում-դառնում էյին իր կողքով:

— Ահա սա լե, — դառնությամբ նայում եր նա անցնող վագոնին, — ահա այս վագոնն եր, չե, այն վագոնն եր, վոր տարավ ու էլ լետ չբերեց իր վորդուն:

Գնացքն անցնում եր, դառնում եր վոլորանը, դադարում եր հեռվում անիվների դղրդոցը, խակ ծերունին տարված իր հիշողություններով, դեռ լերկար մնում եր կանգնած:

Արհավիրքի որերին ամեն ինչ փոխվեց: Ել գնացքները վերջ չունեցին: Գալիս էյին ու գնում էյին ժամանակ — անժամանակ, գալիս էյին ու գնում էյին հարյուրավոր, հազարավոր զինվորներով լցված: Գնում էյին ռազմաճակատներ առողջ, առույգ, վերադառնում էյին խեղանդամված, քայքայված: Յեւ կամ այլևս չեյին վերադառնում, ինչպես իր վորդին:

Ծերունու հիշողություններն ալլեքանում էյին, աարածվում:

Փպտում եր, հեղափոխության որերը հիշելիս, յերբ ամեն ինչ այնպես ցնծուն եր յերևում:



Գնացքները բերնե-բերան լիքը բերում ելին ռազմաճակատներէց տուն վերադարձող կենդանի ճնացած զինվորներին ուրախ լերդերով, պար ու նվազով:

Ինչպես խաբուսիկ մի հուլս ամեն անգամ պատրանք եր ստեղծում նրա համար, վոր անա այս, չե, այն վագոնից ցած կթռչի իր վորդին:

Բայց գնացքները գալիս ելին ու գնում և գիտեր ծերունին, վոր իր վորդին չի գալու լերբեք...

Հեղափոխութեան առաջին շրջանում եր, վոր աղջիկն ամուսնացավ ու քաղաք գնաց:

Մնացին ինքը, կինն ու փոքրիկ Գուրգենիկը, վոր նոր եր ութը տարին լրացրել:

Հետո կլանքը փոխվեց հիմնիվեր:

Հեղափոխութեան առաջին շրջանն անցավ: Ազգութեաններն իրար անցան, լերկերը բաժին-բաժին արեցին իրար մեջ, միմյանց հետ թշնամացան, ստեղծեցին սահմաններ ու սահմաններին վերաբերող որենքներ:

Գնացքների լերթեվեկութունն անկանոնացավ: Որերով գնացքները չեյին գալիս, չեյին անցնում, այլևս հայտնի չե՞ր՝ յի՞րը են գալու, չե՞րը են անցնելու:

Եյանքը դժվարացավ, կենսական պայմանները բարդացան:

Մթերքները վերջացել ելին, գնելու համար փող չունեի, մյուս կողմից ել սովն եր սկսվում. գլուղերն արդեն սպառել ելին վերջին պաշարները, իսկ նորը չեր ցանվում, ցանվածը չեր հնձվում:

Կռիվներ ելին:

Շատ կռիվներ չեղան, շատ մարդիկ սպանվեցին:

Շատ կայարաններ այրեցին, շատ գծամասեր քանդեցին:

Պոեզիի ամուսնացած կանոնավոր եր, այդ մասում կռիվներ չկային, խժոժութուններ չեղան. հեռու լեր ընկած բոլոր բանուկ վայրերից: Բայց լերկաթեքերը ժանգով ելին ծածկվում, կոճերը փոս ելին ընկնում, պտուտակները թուլանում ելին:

Այդ որին կինը հիվանդացավ ու անկողին ընկավ: Սովը սաստկանում եր: Շատ դեռ ու դեռ ընկավ Պոեզիի ամին, բայց շատ քիչ բան կարողացավ ձեռք բերել: Կինը հալվեց ու մեռավ:

Պոեզիի ամին մնաց մենակ իր Գուրգենիկի հետ:

Արդեն ծերացել եր, իսկ պայմաններն ավելի ելին թուլացրել ու մաշել:

Ու մնաց ամալի այդ դաշտում հազար ու մեկ փորձանքներով լի այդ ծանր որերին, վորդու հետ կըծկված այդ սպիտակ տնակում:

Հաճախ եր մտածում հեռանալ, դնալ մեծ քաղաք՝ աղջկա մոտ, փիսալի մոտ, գուցե գտներ նրանց, ուրիշ գործի մտներ, կարողանար իր փոքրիկ վորդու կյանքն ապահովել:

Բայց ամեն անգամ այդպես մտածելիս մտաբերում եր իր պարտականութունը. իսկ չեթե հանկարծ գնացք անցնի, հապա ինչպե՞ս կանի մեքենավարն առանց աղբանշանի, հապա ո՞վ նրան աղբանշան կա:

Ու շարունակում եր մնալ:

Յեվ չեր որերը փոխվեցին և մոտիկ անցյալը մնաց մարդկանց մտքերում վորպես դառը հիշողութուն միայն, Պոեզիի ամին կանգնած եր իր պոստում:

Յերկիրը խորհրդալիանալուց հետո, յերբ վերացան



տասնյակ սահմանները և կարգավորվի սկսեց, կարգավորվեց նույնպես գնացքների չերթնեկութունը:

Մանկան պես ուրախութունից թրթռաց Պոեղզի ամու սիրտը, յերբ չերկար դադարից հետո առաջին անգամ ամայի լուսնի մեջ հնչեց գնացքի դղրդոցը: Հեռվից հնչող անխմելի այգ թղմկոտ թնդչունից հանկարծակի չեկած, մի պահ շվարեց նա, չհավատալով իր ականջներին, սակայն յերբ անիվների գլորտուքի աղմուկն ավելի մոտեցավ, ավելի վորոշակի դարձավ, նա արագորեն վազեց ներս, խլեց պատից կախված կաշվե պատյանում հագցրած կանանչ դրոշակը և մինչ գուրս կգար գծի մոտ՝ դրոշակը պարզելու, գնացքը սուրաց ու անցավ: Մեքենավարը նայեց, տեսավ նրան, ժպտաց, գլխով արեց ու գնացքի հետ անցավ առաջ: §

Իսկ շոգեմեքենայի վրա բարձր ծածանում եր կարմիր դրոշակը, վոր ասես վորպես համբավաբեր, լուր եր տալիս դաշտերին և դաշտերի մեջ այս ու այնտեղ հեռուներսւմ ընկած գլուղերին:

Գնացքի արագ ընթացքից առաջացող հոսանքից ծածանվող կարմիր դրոշակը և շոգեմեքենայի սթիմիկ ծորուն չերգը ազդարարում ելին չերկրի նոր կյանքի գոյասկիզբը:

Առաջին գնացքին հաջորդեց միուսը, ապա՝ խոտորնակի գնացքը և այդպես այլևս անընդհատ: Յերկաթգծերը թոթափեցին իրենց վրա կուտակված ժանգը, փալեցիցն՝ առկաջեղով արեգակի ճառագայթների տակ:

Ծածանվող այդ դրոշակից, աղմկոտ այդ դղրդչունից, մեքենավարի ժպտից ու չերկաթգծերի փալեցի վրդի առավ Պոեղզի ամին: Դառն որերը, նրա կրած

վիրտն ու ցավը չետ մղվեցին պարտականութունների հանդիպ:

Յերկու պարտականութուն եր գգում, չերկու պարտականութուն ուներ նա այժմ. մեկն իր ուղեմասը, մյուսն իր վորդին:

Անցան տարիներ, տարիների հետ կարգավորվեց կյանքը նոր ձևերով. նոր խնդիրներով, այն կյանքը, վորին դիմավորեց նա արդեն իր ծերութան որերին, վորից շատ բան նրա փոքրիկ մտաշխարհին զարմանք եր պատճառում, այնքան հակոտնյա, այնքան տարբեր եր այն աշխարհից, վորի մեջ ապրել ու մեծացել եր ինքը, վորի մեջ անցել ելին իր ինչպես վառվառն, նույնպես և հասուն տարիները:

2

Այժմ բոլորովին մենակ եր մնացել ծերունին իր սպիտակ տան մեջ: Վորդին՝ Գուրգենիկը վաղուց եր, վոր սովորելու յեր գնացել մեծ քաղաք, դեպի ուր ձգվում ելին փայլվող չերկաթգծերը հեռավոր այդ գծամասի վրայով:

Բլուրներ չետ ընկած գլուղի յոթնամյակն ավարտելուց հետո, արդեն կոմյերիտական Գուրգենիկը բլիշի կողմից գործուղվեց մեծ քաղաք՝ տեխնիկում: Սկզբում հակառակեց հայրը — ծանր եր իր համար մենակ մնալ, — բայց դա իսկապես առերևույթ եր. գիտեր, հասկանում եր ծերունին, վոր չերխառաչուցութան առաջը փակել հնարավոր չե, վոր յերխառաչուցութունը զարնան գետակի նման հորդիլու յե և յեթե ինքը կամենա արգելք դնել նրա հորձանքին,



ապա նա կլանելու լե իրեն ու իր վերայով սլանալու լե առաջ, դեպի կանաչապատ մարդագետիսները:

Մի կողմից ել մտքում ուրախ եր ու պարծենում եր: Պարծենում եր, վոր իր վորդին այդպես հառաջադեմ ե և ուշիմ, վոր նա խելացի լե և իր ընկերների շրջանում աչքի յն ընկնում: Ուրախ եր, հակառակ իր միայնակ մնալուն, վոր իր վորդին աշխարհ կտեսնի, խելացի մարդ կդառնա:

Մահճկալի տակ պահված փայտն սնդուկից հանեց «սև որվա» համար տնտեսած մի քանի մանեթը, տվեց վորդուն: Վորդին չեր վերցնում, հրաժարվում եր, առարկելով, վոր ինքը դրամի պետք չունի, վոր գնում ե սովորելու պետության հաշվով. սակայն հաջրը պնդեց իր խոսքը, հարկադրեց վերցնի, հագուստ կարել տա իրեն, զբքեր առնի, իր նոր ընկերների մեջ «ամոթով չմնա»:

Յեվ Գուրգենիկը հրաժեշտ տվեց նրան ու իրերի փոքրիկ կապոցն ուսած, ճանապարհ ընկավ հարեվան կայարանը՝ մի քանի տասնյակ կիլոմետր հեռու իրենց գծամասից:

Այդ որը լերեկոյան հեռավոր այդ գծամասով անցնող գնացքը Գուրգենիկին վերցրեց ու սլացրեց քաղաք, ուր նա՝ ամայության մեջ մեծացած գլուղական միջավայրով խմորված՝ համառորեն կպավ գիտությունը իրենց մեջ ամփոփած զբքերին՝ նրանց հաղթահարելու աննկուն վճռով:

Նա պատրաստվում եր մեքենավար դառնալու. մանկական սերը դեպի լերկաթգիծը խորն եր արմատացել, բնորոշելով նրա անցնելիք ճանապարհը կյանքում:

Մնաց ծերունին մենակ ամայության մեջ ընկած սպիտակ անակում, դեպի սեծ քաղաքներն անցնող ու դարձող այդ գծամասում, ուր լերքեք գնացքները կանգ չեն յին առնում, այլ միայն դրդում ելին ադմկոտ ու մեքենավարների սև հայացքներով դեռ հեռվից վորոշելով բարձրացած դրոշակի կամ լապտերի կանաչ գույնը, սլանում ելին արագ՝ գծի ապահովությանը վստահ:

Մենակ մնաց ծերունին, իր պարտականություններից դուրս միակ դբադմունքը դարձնելով աղալի թողած փոքրաթիվ զբքերն ու նրանից ստացած հազվադեպ նամակները, կարդալով ու վերակարդալով մի քանի անգամ, բազմաթիվ անգամ:

## 3

Ձմռան գիշեր եր: Աստղակերպ ձյան սպիտակ հատիկներն ելին որորուն շարժումներով նագելով իջնում ու իջնում: Դրսում թիփին չարաճճի մանկան նման խաղ եր անում անծայրածիր ճնադաշտի հետ. բռներով կուտակում եր, հյուս եր կազմում ու գիրկ-գիրկ նետում եր այս ու այն կողմ, լցնում փոսերը, ծածկում լերկաթգծերը: Սպիտակ ու հարթ հավասար հարթություն եր փռված, վորին գամել եր իր ծերունական աչքերը:

Տղայից ստացած նամակն եր:

Յերկրորդ որն եր, վոր նամակն ստացել եր: Յերկու որվա ընթացքում նա շատ անգամ կարդացել, կու որվա ընթացքում նա շատ անգամ կարդացել, համարյա բառ առ բառ հիշում եր սպիտակ յերկարավուն թղթի վրա կապույտով գրված բառերը, սակայն կարդում եր այն նորից ու նորից, ամեն մի բառի վրա



կանգ էր առնում, մտածում, ասես ծամում ծամծամում  
եր, ավելի լավ տպավորելու մտքում, ավելի լավ հաս-  
կանալու այն իմաստը, վոր պարունակում էլին վարժ  
ձեռքով ու լայն շարժումով գրված այդ բառերը:

Ճի՛մ շատ սիրելի հայրիկ, — գրում եր Գուրգենիկը,  
աչժմ յես գործնական աշխատանքի չեմ անցեր:  
Հիմի ուսումնս հսպես է. — և դպրոցում ենք սովորում  
— գրքերից, դասախոսանքից, և գործնական աշխա-  
տանք ենք տանում, վոր գրքերից սովորածը լավ  
գործարքի կարողանանք: Շուտով ինձ փորձնական  
գնացք են հանձնարարելու: Մի ամբողջ դնացք, մի  
ահագին մարդատար դնացք: Ես ել՝ իմացած լինես,  
սիրելի իմ ձերուկ, վոր ամեն ուսանողի չեն հանձնում,  
հա՛: Մշուս ամսի հինգին: Ուրեմն շուտով, ահագին  
գնացքի դեկը ձեռքես, կթռչեմ քո տնակի մոտով:  
Տես, գծամասդ կարգին լինի, հա՛... Մամուր, ամուր  
համբուրում եմ իմ Պոեզիի ամուռն:

Կարդում եր ծերունին ու մտածում ինքն իրեն:

Գուրգը ձուռն եր, թիփին կատաղի վազք եր սար-  
քի ձնային լայնածավալ ընդարձակության վրա: Չե-  
լին դանազանվում վոչ խութ ու փոսեր, վոչ դար ու  
բլուր: Չիլին լերեվում յերկաթգծերը՝ ասես ցրալից  
կուչ չեկած ձուռն վերմակի տակ:

Յեվ ձերունու մտքերը կապվում էլին դրսի ձյան  
հետ, քամու սուլոցի, նրա չարածճի պարի հետ:

Անհնարին եր թվում նրան այդ, մտածում եր, վոր  
հենց այնպես է գրել, վորպեսզի ուրախացնի իրեն,  
իրեն սպասող, իր հաջողութունից լերջանիկ զգացող  
ձերունի հոր սիրալը:

Բայց դա անցողիկ մի մխք եր, անհիմն այն չա-

փով, վորչափով վոր վորդին ընդհանրապես կատակ  
չեր սիրում, չեր պատահել, վոր նա իր այլքան լեր-  
կար բացակայության ընթացքում անտեղի ու ավե-  
լորդ մի խոսք գրած լիներ իրեն:

— Ուրեմն ճշմարիտ է, — թռթռաց հալըական սիր-  
տը, պարծանքի ավիքով ուռչելով: — Իր վորդին, իր  
փորրիկ, իր վոտաբոքի վազվզող Գուրգենիկը դեկա-  
վաթիլու չե գնացքը, այն մեծ, այն բազմաթիվ մի-  
մյակց յիտեից շարված վագոնների շարքը, վոր ամեն  
որ այնպես թափով անցնում, դառնում է իր գծամասով,  
շուտափուտ տեղ հասցնել գրութուններ, գործեր, աշ-  
խարհով մեկ սփռող և ամբողջ աշխարհից հավաքած  
լուրեր պարունակող լրագրեր, և պետական, հասարա-  
կական գործերին լծված մարդկանց, վորոնք գնում են  
դեկավարելու, կարգադրելու, համաձայնեցնելու:

Հանկարծ մի անդիտակցական ան, մի սարսուռ  
պատեց ձերունուն և նրա հալացքը ակամայից դար-  
ձավ դեպի լուսամուտը, վորի յետև թիփին ձյան  
հլուսերը գրկած, լցնում եր դար ու փոս, հաստ շեր-  
տերի տակ թաղում եր յերկաթգծերը:

— Կարող է, կարող է արդյոք գնացքն ապահով  
տեղ հասցնել:

Մերունու մարմնով դող անցավ: Վառարանում  
ճըթճըթացող ուրախ կրակն անդոր եր չերմացնելու  
նրա ներքին այդ դողը:

Կարող է վորդին դեկավարել գնացքը... Ձահել է,  
շատ է ջահել դեռ: Ինչպես են վատահել Չե, չե, վեր-  
ջին բուպելին կարգադրութունը կիտխն: Խեղք մար-  
դիկ կան, հասկացող մարդիկ, նրանք չեն թողնի ա-  
հագին գնացքը, մարդատար գնացքն այդպես պատա-



հականության լենթարկվի, մի ինչ վոր անփորձ, ջահել մեքենավարի ձեռք ընկնի... Յեթե իմանան, ճանապարհորդները կհրաժարվեն գնացք նստել:

Տարվա ամենից վատ ժամանակն է, հազար փորձանք կա, հազար աննախատեսելի պատահար:

Արդժժ բոլոր գծամասերն անվտանգ կլինեն: Չեն մոռանա սլաքները ժամանակին փոխել, վոր գնացքն անվտանգ անցնի, ուրիշ գնացքի հետ չընդհարվի...

Ծերուկը պատասխանատու չեր զգում իրեն: Չէ վոր նա իր վորդին եր, նրա կատարած հանցանքը, նրա բերած փորձանքն իրենն եր: Յեթե իմանար, յեթե իմանար, վոր իր վորդին, իր փոքրիկ Գուրգենիկն աղբյուս անխոհեմ քայլ կաներ, չեր թույլ տա, կհակաակեր, վոր նա մեքենավար դառնար. թող ուրիշ բան սովորեր, ավելի լավ եր իր նման գծամասի պահակ դառնար:

Ծերուկը հանկարծ խալթվածի պես վեր ցատկեց նստած տեղից. շարժման թափից վորդու նամակը թռիչք կատարեց սեղանի վրա, պտտվեց ողում ու պտտկեց հատակին, վոտքերի տակ:

Չորը... — կախվեց ծերունու ուղեղում, վորպես անուելի մի անդունդ, վոր իր սև ու մութ բերանը բացել սպասում եր, ասես, կուլ տալու իր Գուրգենիկին:

Չորը... — մոմտաց ծերունին: — Յերկու կողմից անտառապատ բարձր ժայռերով սահմանազծված ալդ վորտանը, ուր կախված կամուրջն եր ընկած ահուելի վորոտով առաջ մղվող գետի վրա... Վերելից ձյան հսկա հյուսերը գլորվում են ցած, լեռնանում են ճանապարհի վրա, ախպես, վոր շոգեմեքենան չի կարող դանում պատուել, հեվում է, թանջում-թառանջում կ

ուժակտուր, շնչահեղձ, տեղի չե տալիս, հրաժարվում է ալլես շարունակել պալքարն ու սահում, դուրս է ընկնում սառցապատ յերկաթգծերից, թեքվում է կողքի, ասես դժվարին մարտնչումից հոգնած, պատրաստվում է պառկելու կողքի, յերկարելու իր ընդարմացած մարմինը: Իսկ ձորը հիպնոզած, իրին է ձգում վագոնները, վորոնց մեջ մարդիկ հանգիստ տարվել են իրենց բազմազան մտածումներով, անգիտակ վրա հասնող փորձանքին:

Ծերունին հուսահատ կոտրատում է ձեռքերը, քայլելով սենյակում, ասես վտանգը պատրաստ է, ահա հասվեհաս է, իսկույն, այս իսկ ակնթարթին վրա չե ընկնելու...

Հանկարծ սթափվում է. լուսամուտի յետև ձմեռալին մառախլապատ որն է գորշանում: Շուտով կանցնի մարդատար 57-ը, այն գնացքը, վորը մի քանի որից անցնելու չե իր վորդու զեկավարությամբ: Կավ է, վոր այսոք չե, դեռ չե, դեռ չե...

Բալց գալու չե, հասնելու չե այդ որը... Բանի որից: Մյուս ամսի հինգին: Նշանակում է լոթն որից, յոթն որից այս ժամանակ, առավոտյան վաղ...

— Պիտի գա, պիտի գա այդ որը, — մղում է այս միտքը նրան ու ծերունին թափով դուրս է նետվում ստուգելու իր գծամասը, մաքրելու իր գծամասը ձյան հյուսերից, մինչև գնացքի գալը:

4.

Ցանկալի առավոտն յեկավ: Ամբողջ գիշեր տեղացող ձյունը լուսադեմի մոտ դադար առավ:

Պոեզիի ամին այս որ շատ վաղ արթնացավ. ավելի



ճիշտ, ամբողջ գիշեր, այն ամբողջ ժամանակամիջոցը, յերբ գնացքններն չերթնեկությունն ընդհատվում եր գծի վրա, չքնեց:

Հագնվեց ու չելավ դուրս. անծալ սպլտակ սալան եր փռված ամեն կողմ, վորը տեղ-տեղ խաթարվել եր նապաստակի վտաքի հետքերով ու տնակի դիմաց, փոքր հեռավորութեան վրա փորփրված շրջանաձև ու դեպի շրջան մոտեցող և հեռացող թաթատեղերի լայն շերտով. գայլերի սովորական արշավանքի հետքերը, վոր հաճախ ելին դարանակալում սպլտակ տնակում ապրող մարդուն, յերբ քաղցը ծայրահեղ աստիճանի յեր հասնում:

Մերունին թին ձեռքին մոտեցավ յերկաթգծին, փորձեց ձյունը. թեթե եր, հեշտութեամբ սահում եր պսպղուն յերկաթնների վրայից, թեպետ խորն եր: Մաքրեց վորոշ տեղ, մաքրեց իր կանգնելու տեղը և ճանապարհ բացեց գեպի տնակը:

Աշխատելու ընթացքում, ահա, մոռացավ որվա արտակարգ լինելն իր համար. կատարում եր իր սովորական, ամենորջա գործը, վոր կրկնվում եր որեցոր, տարեց-տարի, նույն ժամերին, նույն յեղանակին, նույն ձևով:

Հանկարծ հիշեց, կանգ առավ՝ հենված թիին: Միրտը թունդ չելավ, պոռթկաց ուրախութեան ճիչը և տարածվեց ամալութեան մեջ:

— Գուրգենիկը գալիս ե, պոեղդ ե բերում, — լսեց անշարժ օրտեղած ձյունը նրա հիացական բացահայնչությունը:

Մակայն ծերունին չեր զգում, վոր ձյունը անշարժ ե, անխոս ե, վոր այդ նույն ձյունը վտանգ կարող ե

սպառնալ իր վորդու առաջնորդած գնացքի համար, վորից այնպես դող եր յեխում նրա պառաված սիրտը:

— Գուրգենը պոեղդ ե բերում, — կրկնեց ծերունին, այս անգամ դառնալով ձեռքի թիին ու արագ-արագ շարժեց այն, ձյան կույտերը մի կողմ քաշելով և աստիճանաբար առաջ անցնելով:

Յերը հոգնեց, կանգ առավ. զգաց, վոր գուր եր իր աշխատանքը, վոր ձյունը գնացքի անխվների տակ տափակելու, հալելու չե, վոր նա յերբեք, յերբեք չի կարող վնասել իր վորդուն, իր Գուրգենիկի առաջնորդած գնացքին:

Միձողեց ինքն իր վրա ծերունական լիստացող լուռ ծիծաղով:

Ամոթահար շփոթվեց: Յետ դարձավ: Հասավ այնտեղ, ուր կանգ եր առնելու կանաչ դրոշակը ձեռքին: Ձեռքը սովորութեան համաձայն ձախ կողմը տարավ. դրոշակը չեր վերցրել:

Դարավանդով բարձրացավ տնակը: Գիտեր, վոր վաղ ե, բայց աչքը զցեց ժամացույցին. ուղեց ստուգել ինքն իրեն:

Հոգնած զգաց իրեն. նստեց հանդստանալու: Կրկին կանգնեց:

Մոտեցավ սնդուկին, դուրս քաշեց մանձկալի տակից: Մնդուկից հանեց տարիներ շարունակ պահած նոր հազուստը. տոն օրերին, հազվագյուտ անգամ յերը հյուր եր գնում հարեման գլուղում իր ծանոթների տուն, այդ հազուստն եր հազնում: Մի պահ ձեռքում բռնած նաչեց մտադբաղ, ապա սկսեց հազուստը փոխել:

— Չե՞ ախր տոն ե այսօր, Գուրգենիկը գալիս ե,



— մամտում եր ինքն իրեն, հագուստը փոխելով: Յերբ հագուստը փոխեց, վերջացրեց, վտաք ու ձեռք ընկավ: Թեպետ աչքը կրկին ժամացույցին առավ, բայց չհավատաց նրան:

— Դիմամբ դանդաղ ե շարժվում անսխիտանը, ուզում ե ուշանամ, վոր այսօր ուշանամ, — բարկացավ ժամացույցի վրա:

Վերջրեց պատից կախած կանաչ դրոշակը, ծածկեց գլխարկն ու դուրս գնաց:

Իջավ իր կանգնելու տեղը:

Շուտ եր, բայց կանգնեց, բաց անելով փաթաթված դրոշակը: Կանգնեց ձիգ, վտաքը վտաքին, բանակալինի նման:

Ծերունական ձեռքը լարվածութունից, զգացմունքների հորձանքից ցնցվեց: Նա ավելի ամուր սեղմեց դրոշակի փայտը:

Վարժ ականջը հանկարծ վորսաց լերկաթագծերի ցնցումից դողահար հեծեծանքը:

— Գալիս ե, — շտկվեց տեղում ձերունին:

Ու... ու ... ու ... — ուժգին սուլոցը կտրեց ամառության լռութունը: Ապա մյուսը, հաջորդը: Յերկրորդ անգամ այս ամալի ընդարձակության մեջ, բոլոր բնակարաններից կտրված այս մենության մեջ սուլեց գնացքը: Առաջին անգամը, լերբ տարիներ առաջ ինքն իջավ այստեղ, իսկ այս անգամ իր մեքենավար վորդին, վոր ուրախ այդ սուլոցներով վողջունում եր իր ձերունի հորը:

Ահա վորոքանից յերեսաց շոգեմեքենայի խոշոր աշալուրջ աչքն ու առաջ յեկավ:

Ծերունին կրկին շտկվեց տեղում, ավելի ամուր

սեղմեց ցնցվող ձեռքում դրոշակի փայտը, հայացքը դեպի վեր ուղղած, վորպեսզի լավ տեսնի վորդուն, վորն անշուշտ գլուխը դռնից դուրս կհանի կամ գոնե մի նշան կանի իրեն:

Մեկ էլ պայթեց շոգին ու փսսաց, շունչը խփելով ձերունու դեմքին:

— Ի՞նչ ե պատահել, — հանկարծակիի լեկավ ձերուկը: — Քնացքն ինչո՞ւ լե կանգ առնում:

— Վտանգ, — կայծակի պես սահեց ուղեղում ու նա գունատվեց, ուղեց տեցից պոկվել ու առաջ նետվել:

Այդ իսկ ըրպեյին մեկը սկյուռի պես կախվեց վերելից ու ցած թռչելով, գրկեց դեռեվս ուշքի չեկած ձերունուն,

— Հայրիկ, — ուրախ բացականչեց առույգ մի լերտասարդ, պտուղտ տալով նրան իր կանգնած տեղում:

Ու հազիվ եր ուշքը գալով իր կրծքին սեղմել վորդու զգգված մագերով դլուխը և համարել կարոտած դեմքն ու շուրթերը, վորոնցից վերինը սեվով եր աղեղվել, վոր վորդին պոկվեց նրանից, թռավ շոգեմեքենայի վրա, նետելով:

— Ամուր կոց, հայրիկ... Շուտով տուն կգամ:

Մի ակնաթարթ, միայն մի ակնաթարթ տեվեց այդ բոլորը, Յեվ մինչ գնացքի կանգնելուց անհանգստացած ուղեվորները դեմքերը լուսամուտների սեղմեցին իրողութունն իմանալու, շոգեմեքենան ուրախ ու բարձրագույն սուլեց կրկին և առաջ անցավ:

Ծերունին տեսավ ապակիների սեղմված տափակած դեմքերը, վորոնք մի աննշան պահ նրան եյին նայում ու առաջ անցնում՝ գնացքի թափով մղված:



Անցավ վերջին վագոնը:

Դեռ կանգնած շոգին ցրվեց ողում:

Ծերունին շուռ յեկավ՝ հալացքը հեռացող գնացքին:

Գնացքն արդեն ծածկվել էր առջևի վոլորանում:

սակաչն ձերունին դեռ շարունակում էր կանգնած մնալ, ասես չերագում:

Յետ ելին մնացել բոլոր անհանգստությունները, բոլոր կասկածներն ու գնացքը ապահով և սահուն ընթացքով առաջ էր սլանում գեպի իր նպատակակետը:

Յով գնացքի անիվների ութմիկ այդ լերգի դեկավարն իր վորդին էր, իր փոքրիկ Դուրգենիկը, վորը դեռ մի քանի տարի առաջ վոտաբորիկ վազվզում էր այս դաշտերում ու իր հետ թխկթխկացնում էր յերկաթագծերը՝ ստուգելու պտուտակները և կոճերի ամրությունը:

— Չարձճի ... կանգնեցրեց գնացքը ... — ուրախ քացականչեց ձերունին, անգիտակցաբար մի քանի քալլ առաջ անցավ, ձեռքի բաց դրոշակը ծածանելով: Հանկարծ դեմքը մռալվեց:

— Իրավունք չուներ, դրա համար կարելի չէ պատժել, գնացքի հետ խող անել չի կարելի:

Սակայն դա մի ակնաթարթ էր, մի շատ աննշան ժամանակամիջոց, վորպեսզի չիրիտասարդ մեքենավարը կարողանար գրկել իր ձերունի հորը, վոր տարիներ շարունակ պահակ էր նույն այդ գծին:

Ծերունին ժպտաց, ապա նրա կրծքից դուրս թռավ լիաթուք ծիծաղը, զվարթ ծիծաղը յերջանիկության ու կլկյան կոհակներով փռված ձյան անծալ սավանի վրա:

Իսկ գուգահեռ աղուրների մեջ փայլող յերկաթգծերը հեռվից բերում էին հարթ սահող գնացքի սիթմիկ սերթը:

## Տ Բ Ա Գ Մ Ե Լ Տ

### 1

Այնտեղ, ուր կանգնած եմ այժմ չես, առաջ անտաշ քարի բարձր պարսպով շրջափակված մեծ ալգի լեր, Հնկած քաղաքի կենտրոնական մասում, նա մի տեսակ արհեստական փակուղի չեր կազմել ու փողոցի տները շարքով անցնելով, դեմ էին առնում նրան, փակելով հեռապատկերը դեպի վեր: Ու թվում էր նա մի վիթխարի վորովայն, վոր կլանում է քաղաքի ամբողջ հորիզոնն իր բարձր պարիսպների լետե, գմբեթաձև մրգառատ ծառերի սաղարթներում՝ ու վազերի կուզիկ գրկերում:

Յես շատ ելի լսել այդ ալգու մասին: Իմ դասընկերներից նրանք, ովքեր տեղացի էլին, հրաշալիքներ էլին պատմում նրա մասին: Յեվ իմ մանկական յերեվակալությունը վառվռուն պատկերներ էր ստեղծում այդ պատմություններից մինչ այն աստիճան, վոր սկսեց հավատալ, թե հեքիաթային Հազարան Բլրուլը հենց այդ ալգում է ապրում, այդտեղ, այդ ալգու ծառերի սաղարթների մեջ է թագնաված նրա վոսկե վանդակը:

Շատ ելի սիրում այդի. սիրում էի վորովե հաստաբուն ծառի տակ պառկել մետաքսաթել սեղի վրա, մանավանդ այն ժամին, լերք թեթև քամին խառնում է ծառերի տերեվները, չերբ խոտերը դեպի միայանց են հակում իրենց գլխիկները՝ իրանով մեկ



Թեքվելով. չես կարծում եյի, վոր նրանք այդ ժամին գաղտնի, իրենց միայն հայտնի նյութի մասին լերկար-լերկար զրուցց ելին սկսում մերթ հանդարտ-մեղմորոր, մերթ բարկացկոտ-զայրագին:

Մենք այդի չունենք. միակ ծառը, վոր տեսնում եյի յես, մեր բակի կոծիծափոր ուռնինն էր, վոր Թեք բուսել էր դեպի փողոց նայող պատի հիմքի ահագին քարի ճեղքից: Ինչո՞ւ յի բուսել այդ ծառը, կամ ինչո՞ւ նա միակն էր, յես այնպես ել չիմացա, միայն նկատում ելի, վոր նա, այդ կոծիծափոր ծառը համառ պայքար է մղում իր գոյության համար: Վոչ վոք չեր խնամում նրան, չեր ջրում ու հողը փորում — փխրունացնում. սնունդի պակասությունից նրա ճուղերը հաճախ եյին չորանում, նա թառամում էր, բայց լարում էր բոլոր ուժերն ու կրկին նոր մի ընձյուղ էր արձակում կանաչ ու դալար:

Յես ատում եյի մեր բակի այդ ծառը, վորովհետև նա միայնակ էր և իր միայնակութեամբ հիշեցնում էր մեծ ու ընդարձակ, ծաղկուն ու փարթամ պարտեզները՝ բարձր պարիսպներով շրջափակված:

Յես ուզում եյի մեծ պարտեզներ տեսնել, մեծ պարտեզների ոգը շնչել:

Ու վորոշեցի ներս մտնել այդ մեծ այգին. բուռն էր իմ տենչանքը՝ տեսնել Հաղարան բլրուլի վոսկե վանդակը, նայել այդ հազվագյուտ բազմերանգ թռչունին, վողջ բնությունը գվարթացնող գեղգեղանքը նրա լսել:

Գարունը բոլորելու վրայիս: Բարձր պարսպից յերեվում ելին արդեն ծաղկած ու նոր նոր մեծացող տերեվներով ծառերի խիտ գազաթները: Ամեն որ դա-

սերից հետո յես պտտում եյի այդ պարսպի չորս բուրբը և վերջապես ընտրեցի մի համեմատաբար հեշտ տեղ՝ պատը մագլցելու:

Դպրոցական պարապմունքներից մի ազատ օր՝ մի կիրակի օր՝ հազա իմ նոր հագուստն ու շսապեցի իմ վաղեմի ցանկությունն իրազործելու. յես կամենում ելի Հաղարան բլրուլին հանդիպիլ նոր հագուստներով:

Մեծ դժվարութեամբ վեր մագլցելով ու մի քանի անգամ ցած գլորվելով, վերջապես կանգնեցի պատի գլխին ու ... իջա այգին ...

Պատի տակ թագնավելով, առաջ ելի գնում: Վոչ վոք չեր չերեվում, Յես գողութուն անելու համար չեյի մտել այգին, ուստի սիրտ առա և դուրս լեկա կենտրոնական մաս:

Դեվար էր մեկ հայացքով ընդգրկել այգու ամբողջութունը: Մի կողմ խաղողի վազերն ելին արեվելյան գեղեցկուհիների նման փարթամ իրանների նազան գալարումներով փովել իրենց փափկացրած թմբերին, ասես պարսկական գորգի թավամազ խալի վրա, մյուս յերեք կողմ մրգատու ծառերն ելին շարքերով կանգնել՝ շիմշատ իրաններով վեր բարձրացրած ծանրաբեռ գլուխները: Մեջ տեղ մարգեր ելին, մեծ ու փոքր, յերկար ու նեղ մարգեր և գեղեցիկ տաղավարի շուրջը՝ ծաղկանոց. վարդի թփերն ուռճացել եյին բազմաթերթ ու բազմաբույր կոկոններով:

Մքանչելի չեր:

Թովված կանգնել ու հայացքս պտտում եյի մեկից մյուսը, մեկ ծաղկանոցից մյուս ծաղկանոցը:

Ինձ թվում էր, վոր իմ փնտռած վանդակը հենց այդտեղ, ծաղկոցի չորս բուրբը բարձրացող հասմիկի



ու հակակի ծառերի ճուրհերի մեջ պիտի թաքնված  
լինի:

Հայացքս մուրիկ — մուրիկ փնտռում եր սաղարթ-  
նների խորքը:

Բայց այդտեղ իմ յերազը վերջացավ:

Մի ձեռք ցավացնելու չափ ուժեղ բռնեց ուսս:  
Յետ դարձա:

Առաջս կանգնած եր կարճահասակ մի մարդ՝ լայն  
ու փայլելու աստիճան սափրված դեմքով, յերկար,  
դեպի յետ քաշած բեղերով, արխալուղի վերայից կա-  
պույտ բաճկոն հագած:

Այգետերը — հասկացա յես:

Թոթվեցի ուսս ու դուրս պրծա ձեռքից, փախա  
ծաղկոցի կողմով: Բայց նա ընկավ յետեվիցս ու բռ-  
նեց:

Յես դեռ փոքր ելի... իսկ նա ուժեղ եր...

Գլորվեցի ծաղկի մարգերի մեջ:

Նա չխնայեց նույնիսկ ծաղիկները:

Ծաղիկները կոխկրտսելով նա ծեծեց ինձ:

Յեվ չերբ դոհացավ, քարշ տվեց ինձ իր յետեվից  
տապրակի նման ու մեծ դարպասից դուրս շարտեց  
փողոց...

## 2

Յես կրկին տեսա այն այդին, ավելի ճիշտ՝ այդու  
տեղը:

Չկար այլևս բարձր ու վողորկ պարիսպը, չկային  
վոչ խաղողի վաղերը, վոչ ծառերը մրգաբեր, վոչ մար-  
գերն ու ծաղկանոցը փարթամ:

Յեվ այնտեղ, ուր մի ժամանակ լուսթյունն եր

տիրում և մանկական լերեվակալուծյամբ Հազարան  
բլրու ըն եր դալլալում հասմիկ ու հակակի ճուրհերի  
բուրավետ ծոցում, այժմ դղրդում ու շունչում ե հսկա  
մի աշխատանք:

Մի կողմ քարաշարդ մեքենան ե կլանում կարծր  
քարերի անաբին կտորներն ու խճի կույտերը ժայթ-  
քում կրծքից՝ բլրակներ կապմելով: Մյուս կողմ  
քարտաշներն են գրանիտի ծանր ու սրգատյան  
ուժով գլորված ժայռաչափ կտորները տաշում, դժվա-  
րին աշխատանքով հղկում դիմակողմերը: Յեվ հա-  
բլուրներով հողափորեր ու բետոնազորքծներ փորում են  
պեղանը, լցնում են հիմքը:

Ու բարձրանում ե, բարձրանում ե բետոնակարծր  
հիմքը, շուտով իր մեջքին ծառացնելու տաղանդավոր  
ճարտարագետի մտահաղոցումը՝ կամարակապ իր  
սրահներով, հաղթող դասակարգի կուլտուրայի հաղթա-  
նակը:

Այնտեղ, այն տրորված վարդենու տեղ բեմն ե  
խոշանում նժույզի պայտի նման լեզրափակվելով ու  
իր միջին մասի կորնթարթու թյամբ սրահների սո-  
վորական տարածությունները մոռացության մասնելով:

Չկա այլևս ալգետերը, վոր իր ժպտուն, ստրբ-  
կական դեմքով ծաղկեփնջեր եր նվիրում նահանգա-  
պետի ու դատավորի կանանց:

Գուցե նա կա վորպես Ֆիզիկական առարկա, բայց  
նա չկա այլևս վորպես հորեղոնը շղթայող իր բարձր  
պարիսպներով:

Կանգնած այստեղ, կառուցման այս դղրդոցի, այս  
շոխնդի քոսի մեջ, յես փակում եմ աչքերս ու պայծա-  
ռորեն տեսնում եմ սրահներն այդ բարձրացող լեցուն



բազմահազար ժպտուն դեմքերով, բոլոր նրանց, վորոնք դուրս ելին շարաված դարպասից ու լսում եմ կամարների արձագանդը զարգացող ու ծավալուն խոսքի և տաղերգութչան:

Յես լսում եմ իրական, կենդանի՝ բազմաձայն ու բազմահազար Հ. դարան բլբուլի յերգը բոլորի համար:

Յեվ շրջում եմ պարիսպների փոխարեն ծառագարդ-ված պանթեոնի անդրինների շարքերում այն մարդկանց, վորոնք հոյակապ կոթողներն այդ կերտեցին, նրանց՝ վորոնք հազարների կամքը դարձնեցին:

## ՀՈՌՈՍ ՔՈՒՅՐԻԿԵ

Սպիտակները գրավել էին գյուղը:

Փափախավոր խ'բապետի կարգադրութչամբ բոլոր գյուղացիներին հավաքել էին գյուղի հրապարակում, շրջապատել էին:

Հոռոմին ել էին բերել:

Պատառոտուն հագուստը հազիվ եր ծածկում նրա մերկությունը:

Նա վոչվոք և վոչինչ չուներ:

Նրա տունը չորս պատ եր, միշտ մութը, միշտ ցուրտ, դռները միշտ փակ:

Յերկու տղա լեր ունեցել, յերկուան ել սպանվել էին պատերազմում:

Ամուսինն ել դարդից քամվեց, չորացավ ու մեռավ:

Հոռոմը չդիմացավ այդչափ ցավին, խելքը կորցրեց:

— Դարդից խելքը կորցրեց, — ասում էին համագյուղացիները և պահում, խնամում էին նրան:

Ամեն առավոտ ամառ թե ձմեռ կերթար գյուղի տակ, մեծ ճանապարհին կնստեր մինչև յերեկո, ձեռքերը կրճքին, այքերն ուղղած տարածութչան մեջ կորած ճանապարհի հեռավոր մի կետի:

— Ի՞նչ ես անում այստեղ, Հոռոմ քույրիկ, — կհարցնեին հանդիպողները:

— Բա, եքիս եմ սպասում, — կպատասխաներ ու կըրկին քարացած կմնար անշարժ:



Բարին ու չարը չեր հասկանում, չեր հասկանում թե ինչ է կատարվում չորս բոլորքը:

Հանգիստ եր, հանգած աչքերով:

Թվում եր նայում ե, բայց չի տեսնում:

Իսկ յեթ՞՞ փորձում եյին նստած տեղից վեր հանել, տուն տանել, կատաղում եր, հարձակվում եր՝ պատրաստ կտոր-կտոր անելու:

— Դու չե՞ս ուզում, վոր բալեքս գան հա, դու յես սպանել բալեքիս, — ասում եր ու քար, փայտ, ինչ ձեռքն ընկնի, նետում եր այդպիսիների վրա:

Միակ միջոցը, վորով հնարավոր եր նրան տուն տանել, մի կտոր հաց կերցնել, փալասների մեջ քնելու պառկեցնել, բալեքի անունն եր:

— Ախր բալեքը յեկել, քեզ են սպասում...:

— Բալեքը լաց կլինեն՝ թե սոված մնաս...:

Յե՛վ փոքր մանկան պես հնազանդ, կյենթարկվեր: Հիմի կանգնած հրապարակում մյուսների հետ, նայում ե շրջապատող փափախավոր դիմվորների ու միտք ե անում, թե այդ ինչո՞ւ թուլլ չեն տալիս իրեն՝ զնա նստի ճամբին, բալեքին սպասի: Յերևի հիմի հեռվից յերեվում են նրանք...:

Հանկարծ նրա գլխով արագ մի միտք ե անցնում, թե չլինի՞ հենց սրանք չեն թողնում, վոր իր բալեքը գան:

Ու դառնում ե մոտը կանգնած ծերունուն:

— Ամի, ես իս՞ յեն մեր չորս բոլորը կտրել, չեն թողնում գնամ բալեքիս սպասեմ:

— Սուս, հարսի, — ասում ե ծերուկը, — լավ կանեն հիմի չգան, թե չե սրանք կրոնեն, ելի կտանեն...:

— Չլինի՞ հենց սրանք չեն թողնում, վոր գան...:

— Հա, հարսի, սրանք են. սրանք մեզ թշնամի յեն: Հիմի ել յեկել են, ուզում են մեր բալեքին բռնեն, տանեն...:

Ուզում են սպանեն, ամի:

— Հա, հարսի, հա:

Սուս ե անում Հոռոմն ու միտք ե անում:

Միտքը կարծես պարզում ե. սկսում ե կտրծես հասկանալ չորս կողմի անց ու դարձը:

«Ուզում են Պողոս ապոր, Ավագ ամու, Ալմաստատի բալեքին բռնեն տանեն. վոր սպանեն...»:

Մտածում ե, մտածում ու կրկին դառնում ե ծերունուն:

— Ամի, բա դե ընենց պիտի անենք, վոր չբռնեն.

— Հա, ըտենց պըտի անենք:

— Այի, բա վո՞րց անենք:

— Սուս, հարսի, կլսեն, քեզ ել կծեծեն: Ինչ կարաս դու անել:

— Չե, դու ասա, յես կանեմ: Սրանք վոր քաղաք զնան, ճամփին բալեքիս կտեսնեն, կբռնեն:

Կախ ե գյում ծերունին ալհեհղ գլուխն ու չի պատասխանում:

«Ի՞նչ կարող ե անել ցնորված պառավը», մտածում նա:

Իսկ Հոռոմը ձեռք չի քաշում:

— Դու ուզում ես, վոր սրանք բոլորին սպանեն, հա: Դու ուզում ես, վոր բալեքիս բռնեն, հա, — ասում ե նա ու աչքերը փալլատակում են արտասովոր կրակով:

— Դե ել ի՞նչ կա անելու, — կամացուկ ասում ե ծերունին, հարկավոր ա քաղաքին իմաց տալ սրանց տեղը...:



— Յես իմաց կանեմ, — նուշնալեօ կամացուկ ա-  
սում ե Հոռոմը, բնազդարար զգալով, վոր այդ մասին  
չպետք ե իմանան ուրիշները:

Յերբ լերեկոյան խմբապետը հրապարակում հավաք-  
վածներին անարգանքի ու ծեծի յնթարկելուց հետո  
մարազը լցրեց, Հոռոմը նրանց մեջ չեր:

Սարերի անանցանելի առապարներով քաղաք եր  
շտապում Հոռոմը, ինչ վոր աներեվույթ ուժից մղված:

Գնում եր ու մտածում, վոր պետք ե շտապել:

Վազ եր տալիս: Ընկնում եր, բարձրանում, կրկին  
վազ տալիս:

Կարծես լսում եր զավակների կանչը:

— Շուտ, շուտ, շուտ...

Լույսը նոր ցուլքեր եր զցել սարերի դռին, վոր  
հեղափոխական բանակը շրջապատեց գլուղը:

Հոռոմն ել նրանց հետ եր:

Կոիվը կարճատև եր, բայց արչունալից:

Կովից հետո հաշվեցին տեսան, վոր շատերն ելին  
սպանվել:

Հոռոմն ել չկար:

Փնտռեցին ու դտան մեծ ճամբի վրա սպանված:

Պսակել եր մեջքին հանգիստ, մի չերջանիկ ժպիտ  
չրթունքներին, կարծես ասում եր.

— Վերջապես բալեքս լեկան...

Յերբ գիակը բերեցին հրապարակ, բոլորը զլիարկ-  
ները հանած խոնարհվեցին, վերջի ու հավիտենական  
հրաժեշտ տալով նրան:

Հեղափոխութունը փրկված եր:

Կրկին վերադարձավ գլուղի խաղաղ կյանքը:

## Մ Ա Ն Կ Ի Կ Ը

Փոքրիկ, վտիտ, ցնցոտիների մեջ փաթաթված  
մանուկ եր նա հոգնածութուն և անհուն վիշտ ար-  
տահայտող սև աչքերով:

Ով եր նա, վոչ վոք չգիտեր և չելին ել հետաքըր-  
քրվում:

Այնքան նրա նմանները կալին, վոր շատ անգամ  
նրանց զանազանել չեր լինում և ինչ կարիք ել ու-  
նելին մարդիկ, այն ել այնպես պճնված և ինքնագոհ,  
զանազանելու նրան ուրիշներից:

Մի մուրացկան եր և ուրիշ վոչինչ:

Վտտենար, լետևիցդ մի քանի քայլ կգար ու  
աղերսական ձայնով, կամացուկ կխնդրեր.

— Հիսուն հազար տաս... սոված եմ...

Յերբեմն տալիս ելին, բայց շատ անգամ մերժում  
ելին:

Ու նա հեռանում եր լուռ, մոտենում եր մեկ ու-  
ուրիշին ու կրկին լսում ելիր.

— Հիսուն հազար տաս... սոված եմ...

Մի կերպ քարշ եր տալիս իր քաղցած գոյութունը:

Յերբ ուշ գիշերներին քաղաքային այգին ու Արով-  
լան փողոցը դատարկվում եյին, նա կծկվում եր խա-  
նութներից մեկի անկյունում գետնին ու քնում:

Մի առավոտ, յերբ հացավաճառը բաց եր անում իր



խանութքը, նկատեց, վոր մի մուրացկան, մեչքը խոս-  
նութի դռանը հենած, քնել է:

Վտաքով խփեց՝ արթնացնելու, սակայն նա անշարժ  
էր:

Սոնարհվեց վերան, մի կողմ քաշելու և յերբ ձեռ-  
քը կպով նրա սառած մարմնին, հասկացավ, վոր  
նա դուցե հենց նոր կամ մի քանի ժամ առաջ մե-  
ռել է:

Ու ճանաչեց այն փոքրիկ, ցնցոտիների մեջ փաթաթ-  
ված սև, խորունկ վիշտ արտահայտող աչքեր ունեցող  
մանկանը, վորը յերեկ ուշ յերեկոյան այնպես աղեր-  
սում էր իրեն մի կտոր հաց տալու և վորին ինքն  
այնպես կոպտորեն մերժեց:

Յերեկ փոքրիկի բաղդը թեքվել էր:

Ամբողջ որը վոչ վոքեց չկարողացավ վոչինչ ստանալ:

Մինչև ճաշ դեռ մի կերպ անց կացրեց. շուկայում  
թափված թութ ու տերևներ հավաքել — տաելով, սա-  
կայն յերեկոյան դեմ դրութլունն արդեն անտանելի յեր:

Գաղցն այնպես էր սաստկացել, ստամոքսն այն-  
պես էր կծկվել ու աղաչական պահանջ էր անում, վոր  
նա ուժասպառ, քուլիլ էլ չէր կարողանում. բայց մի  
անգամ էլ փորձեց, մանավանդ, վոր զրոսավայրն ար-  
դեն լիքն էր մարդկանցով,

Հուսակտուր ու համբորեն անցնում էր նա խա-  
նութների առաջով: Ահա փուռը: Ինչքան շատ հաց կա  
այնտեղ, դարսած միմյանց վրա, դարակներում: Դե ինչ  
է պակասելու, յեթե մի կտոր, փոքրիկ մի կտոր իրեն  
տան: Շատ չի ուզում, այնքան, վոր կարողանա մի  
կերպ հանգստացնել ստամոքսը:

Մտեցավ, կանգնեց շեմքին, լուռ, հոգնած աչքերն  
իրենից այնքան մոտիկ հացերին ուղղած:

Հացավաճառն անուշ-անուշ խոսելով, հաճախորդ-  
ների համար հաց էր կշռում:

— Ի՛նչ բարի մարդ ես, — մտածում էր մանուկը, — չի  
մերժի, մի կտոր, մի փոքր կտոր կտա, անպայման կտա:

Յերբ հաճախորդները հեռացան, տղան զգուշու-  
թյամբ ներս մտավ խանութ և վիզը ճկած, կանգնեց  
դռան մոտ:

— Աղա...

— Դու եյիր պակաս... դժուր կորի, — գոռաց հացա-  
վաճառը:

Տղան յիշով խանութից արցունքներն աչքերին,  
կանգնեց մալթին անորոշ, ապա քաշվեց անկյունը,  
պատի տակ, նստեց գետնին ու անձայն արտասովեց:

Փողոցները դատարկվեցին, էլ վոչվոք չկար. յերբեմն  
լսվում էր քաղաքապահների ազդանշանի սուլոցը:  
Պառկեց, զալարվեց գետնին ու... նվաց...

Յերկար լսվում էր նրա նվոցը...

Յե՛վ այն առավոտ, յերբ գիշերապահները գտան նրա  
դիակը փողոցում, վոչ վոք, բացի հացավաճառից,  
չիմացավ, վոր դա այն փոքրիկ, այն վտիտ մանկիկն  
էր, վոր կգար կկանգներ ձեր առաջ իր հոգնած և  
անհուն վշտով լեցուն աչքերը վերադ հառած, կխնդրեր.

— չիտուն հազար տաս... սոված եմ...





Ց Ա Ն Կ

	Եջ
1. Արեւիկի մարզը . . . . .	8
2. Հասցեկցում . . . . .	33
3. Ֆրագմենա . . . . .	53
4. Հոռոմ քույրիկը . . . . .	59
5. Մանկիկը . . . . .	63

---





«Ազգային գրադարան»



NL0361993



58405

ԳԻՆԸ 50 Կ.

34-  
0258



Ա. ԹԵՐ-ՕՎՆԱՆՅԱՆ  
ԷՏԿԻԶՅԷ  
Գիշ ՍՍՐ Արմենի, Զրիվան